




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿ**

[ՓԵՏՐՎԱՐ 2025]

Նախագիծ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| 1. ԱՍՓՈԹ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ..... | 8 |
| 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 14 |
| 3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ..... | 16 |
| 3.1. Ծրագրի բաղադրիչները..... | 16 |
| 3.2. Ծրագրի կլաստերները..... | 21 |
| 4. ԲՄԿՇ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ.... | 25 |
| 4.1. ԲՄԿՇ մոտեցում և մեթոդաբանություն..... | 25 |
| 4.2 ԲՄԿՇ Հիմնավորում և Նպատակ..... | 26 |
| 4.3 ԲՄԿՇ-ն պոտենցիալ կիրառողներ..... | 27 |
| 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐ..... | 28 |
| 5.1. Ազգային իրավական դաշտ..... | 28 |
| 5.2. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում եւ պետական փորձաքննություն..... | 36 |
| 5.3. Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական շրջանակ .. | 38 |
| 5.4. Տարբերությունների վերլուծություն ԲՄԿՇ-ի եւ ազգային իրավական շրջանակի միջեւ .. | 43 |
| 6. ԾՐԱԳՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ՊՈՏԵՆՑԻԱԼ ԲՄ ՌԻՍԿԻ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ..... | 57 |
| 6.1. Համառոտ բնապահպանական և սոցիալ-տնտեսական էլակետ..... | 57 |
| 6.2. Ծրագրի գործունեության համառոտ ակնարկ..... | 61 |
| 6.3 Գործունեության` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները .. | 63 |
| 6.4. Շրջակա միջավայրի ազդեցությունների մեղմման առաջարկվող միջոցներ..... | 65 |
| 6.5. Գործունեության հնարավոր սոցիալական ազդեցությունները | 67 |
| 6.6. Առաջարկվող սոցիալական ազդեցությունների մեղմացման միջոցառումները .. | 70 |
| 6.7 ԲՄ ղիտագնում եւ շրջանակի սահմանում..... | 73 |
| 6.8 Բնապահպանական և սոցիալական ռիսկերի դասակարգում | 74 |
| 6.9 Հողերի օտարման և տարաբնակեցման ղիտագնում..... | 77 |
| 6.10 Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման ու կառավարման գործիքներ..... | 77 |

| | |
|---|-----|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ | |
| 6.11 Մշտադիտարկում, վերահսկում եւ հաշվետվություն | 78 |
| 6.12 Հաշվետվություն պատահարի մասին..... | 80 |
| 6.13 Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ..... | 80 |
| 7. ԲՄԿԾ-ի իրականացման նախնական բյուջե..... | 81 |
| 8ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ | 82 |
| 8.1 Իրականացման պայմանավորվածություններ | 82 |
| 8.2 Ինստիտուցիոնալ շրջանակ | 83 |
| 9. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄ..... | 87 |
| 9.1 Շահակիրների ներգրավում եւ տեղեկատվության հանրայնացում | 87 |
| 9.2 Բողոքների մեխանիզմ | 88 |
| 10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ | 89 |
| Հավելված 1..... | 89 |
| Ընտրված մարզերի եւ կլաստերների հիմնական սոցիալ-տնտեսական բնութագրերը | 89 |
| Թիրախային կլաստերային համայնքների կենսաֆիզիկական էլակետային տվյալները | 94 |
| <i>Արենի</i> | 94 |
| <i>Դիլիջան</i> | 94 |
| <i>Դվին</i> | 95 |
| <i>Եղեգիս</i> | 96 |
| <i>Գորիս</i> | 96 |
| <i>Գյումրի</i> | 97 |
| <i>Ջերմուկ</i> | 98 |
| Հավելված 2..... | 100 |
| Հավելված 3..... | 104 |
| Հավելված 4..... | 107 |
| Հավելված 5..... | 109 |
| Հավելված 6..... | 124 |
| Հավելված 7..... | 128 |
| Հավելված 8..... | 131 |
| Հավելված 9..... | 134 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|------|---|
| ԱԱ | Առողջություն և անվտանգություն |
| ԱԱԱ | Աշխատանքային առողջություն և անվտանգություն |
| ԱԱՏՄ | Առողջության և աշխատուժի տեսչական մարմին |
| ԱԻԱԲ | Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ |
| ԱԿԸ | Աշխատուժի կառավարման ընթացակարգեր |
| ԱՀԿ | Աշխատուժի համաշխարհային կազմակերպություն |
| ԱՄԳ | Աշխատանքի միջազգային գործակալություն |
| ԱՊ | Ազգային պարկ |
| ԱՊՄ | Անհատական պաշտպանության միջոցներ |
| ԱՊՆ | Ասբեստ պարունակող նյութեր |
| ԲԸՏՄ | Բնապահպանության և ընդերքօգտագործման տեսչական մարմին |
| ԲՀՄ | Բողոքների հասցեագրման մեխանիզմ |
| ԲՄ | Բողոքների մեխանիզմ |
| ԲԸՏՄ | ԲՆապահպանության և ընդերքի տեսչական մարմին |
| ԲՄԳ | Բնապահպանական և սոցիալական գնահատում |
| ԲՄԱԳ | Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում |
| ԲՄՇ | Բնապահպանական և սոցիալական շրջանակ |
| ԲՄԱԱ | Բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության |
| ԲՄԿՇ | Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ |
| ԲՄԿՊ | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան |
| ԲՄԶ | Բնապահպանական և սոցիալական չափորոշիչ |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ԵՊՀ | Երևանի պետական համալսարան |
| ԶԿ | Զբոսաշրջության կոմիտե |
| ԶՄԵԾ | Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր |
| ԷՆ | Էկոնոմիկայի նախարարություն |
| ԹԿՊ | Թափոնների կառավարման պլան |
| ԻԿ | Իրականացնող կազմակերպություն |
| ԾԳՄ | Ծրագրի գործադիր մարմին |
| ԾԻԳ | Ծրագրի իրականացման գրասենյակ |
| ԾԻՄ | Ծրագրի իրականացման մարմին |
| ԿԳՄՍ | Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի Նախարարություն |
| ԿԶԾ | Կլաստերի Զարգացման Ծրագիր |
| ԿԿԾ | Կենսաբազմազանության Կառավարման Ծրագիր |
| ԿՄԶ | Կայուն մարզային զարգացում |
| ԿՊՀՀ | Կենսապահովման պայմանների համապարփակ հետազոտություն |
| ՀԱՀ | Հայաստանի Ամերիկյան Համալսարան |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀԲՄ | Հետադարձ կապ և բողոքների լուծման մեխանիզմ |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| | |
|----------------|--|
| ՀԿՀ | Համայնքային կապի համակարգող |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՀԿ | Հայաստանի Հանրապետության կառավարություն |
| ՀՄԿ | Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն |
| ՀՄՆ | Հանրային-մասնավոր ներդրումներ |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ՄԱԼԳ | Միջազգային Արդյունաբերության Լավ Գործելակերպի |
| ՄԶԳ | Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն |
| ՄԺԿԾ | Մշակութային Ժառանգության Կառավարման Ծրագիր |
| ՄԻԱՎ | Մարդու Իմունային Անբավարարության Վիրուս |
| ՄՊ | Մշտադիտարկման պլան |
| ՇՄԱԳ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում |
| ՇՄԱԳԿ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կենտրոն |
| ՇՄՆ | Շրջակա միջավայրի նախարարություն |
| ՆԾՖ | Ներդրումային ծրագրի ֆինանսավորում |
| ՇՆՇ | Շահակիրների ներգրավման շրջանակ |
| ՇՆՊ | Շահակիրների ներգրավման պլան |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՊԱԹՊՄՊԾ | Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն |
| ՏԿԵՆ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ՏԿԶ | Կայուն տարածաշրջանային (զբոսաշրջային) զարգացում |
| ՏՏԵԶԾ | Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր |
| ՏՔՇ/ՏՇ | Տարաբնակեցման (քաղաքականության) շրջանակ |
| ՈւԳՊ | Ողղիչ Գործողությունների Պլան |
| ՈԻԿԳ | Ուղղության կառավարման գրասենյակ |
| ՓՄԶ | Փոքր և միջին ձեռնարկություններ |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |

1. ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիրը (ԶՄԾ) բաղկացած է չորս փոխկապակցված բաղադրիչներից, որոնք միասին կխթանեն կլիմայական դիմակայուն ենթակառուցվածքների հասանելիությունը տեղական համայնքների և այցելուների համար, կբարելավեն ընտրված վայրերի գրավչությունը, հնարավորություն տալով ստեղծել նոր աշխատատեղեր՝ խթանելով տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ոլորտի ներդրմանը:

Բաղադրիչ 1: «Ինտեգրված և կայուն կլաստերի զարգացման խթանում» կֆինանսավորի տեխնիկական աջակցության (ՏԱ), խորհրդատվական ծառայությունները, վերլուծական և տեխնիկական ուսումնասիրությունների աշխատանքները՝ կլաստերի զարգացման ծրագրերի (ԿԶԾ) մշակման և իրականացման համար:

Բաղադրիչ 2 – «Աջակցություն կլիմայական առումով ճկուն ենթակառուցվածքներին և տեղական տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցության խթանում» բաղադրիչը նպատակ ունի վերացնել ԿԶԾ-երով հայտնաբերված հիմնական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև մարզային զբոսաշրջության զարգացման տեսակետից ծառայությունների բացերը յոթ կլաստերներում: Գործողությունների ընտրությունը հիմնված է լինելու Բաղադրիչ 1-ի շրջանակներում մշակված ԿԶԾ-երի վրա: Ֆինանսավորվելու են տեխնիկատնտեսական հիմնավորումները, ինժեներական և տեխնիկական տեղագնությունները, կառավարման և վերահսկողության խորհրդատվական ծառայությունները, ճարտարապետական ու ինժեներական նախագծերը, ինչպես նաև շինակարարական աշխատանքները: Այս բաղադրիչը ներառում է՝

- **Ենթաբաղադրիչ 2.1.** Ենթակառուցվածքների և ծառայությունների վերականգնում և արդիականացում
- **Ենթաբաղադրիչ 2.2.** Մասնավոր հատվածի ներգրավման խթանում, մասնագիտական հմտությունների զարգացում և աշխատատեղերի ստեղծում

Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում և գործառնական աջակցություն

Ֆինանսավորումը ներառում է ընդհանուր ծրագրի կառավարման ծախսեր՝ գործառնական ծախսեր, խորհրդատվական և ոչ խորհրդատվական ծառայություններ, տրանսպորտային միջոցներ, ապրանքներ, հաղորդակցություն, իրազեկում, աուդիտներ և վերապատրաստում:

Բաղադրիչ 4 - Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչը թույլ կտա արագորեն վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները հրատապ կարիքների համար աղետի (երկրաֆիզիկական, կլիմայական կամ տեխնածին) կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակների դեպքում:

ԶՄԾ-ի շրջանակներում նախատեսվում է **համայնքային դիմակայուն զբոսաշրջության զարգացում** հետևյալ յոթ կլաստերներում՝ **Արենի, Դիլիջան, Դվին, Գորիս, Գյումրի, Ջերմուկ, Եղեգնի**: Նախագիծը միտված է տարածաշրջանային զարգացմանը, ՇՄ կայունության պահպանմանը և համայնքների ներգրավմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԶՄԵԾ –ի նպատակն է խթանել կայուն, ներառական և կլիմայական դիմակայուն զբոսաշրջությանը յոթ կլաստերներում՝ Արենի, Դիլիջան, Դվին, Գորիս, Գյումրի, Ջերմուկ և Եղեգիս: Այս շրջանակն ապահովում է, որ բնապահպանական և սոցիալական (F&S) նկատառումները ինտեգրված լինեն նախագծի պլանավորման, նախագծման և իրականացման գործընթացներում՝ նվազեցնելով բացասական ազդեցությունները և առավելագույնս մեծացնելով տեղական համայնքների համար ստացվող օգուտները:

Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագրի (ԶՄԵԾ) Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակը (ԲՄԿՇ) սահմանում է համակարգված մոտեցում բնապահպանական և սոցիալական (ԲՄ) ռիսկերի կառավարման համար ապահովելով համապատասխանությունը Հայաստանի ազգային կանոնակարգերին և Համաշխարհային բանկի (ՀԲ) բնապահպանական և սոցիալական շրջանակին (ԲՄՇ): Այն նաև սահմանում է ուղեցույցներ՝ ԶՄԵԾ-ի գործողությունները կարգավորող պահանջներին համապատասխանեցնելու համար՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով ռիսկերը և առավելագույնի հասցնելով դրական ազդեցությունները: ԲՄԿՇ-ն կարևոր գործիք է հանդիսանում ապահովելու ԶՄԵԾ-ի խթանմանը կայուն զբոսաշրջությունը՝ միաժամանակ պահպանելով Հայաստանի բնական և մշակութային ժառանգությունը:

ԲՄԿՇ-ի նպատակն է ուղղորդել իրականացնող կազմակերպությանը՝ ծրագրի համապատասխան բաղադրիչներն իրականացնելու ընթացքում՝ պահպանել ազգային և տեղական կանոնակարգերը ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին (ԲՄՍ) համահունչ, որոնք առնչվում են ԶՄԵԾ-ին: Ստորև ներկայացված են ԲՄԿՇ-ի հիմնական նպատակները՝

- Գնահատել ծրագրից և դրա գործողություններից բխող հնարավոր սոցիալական և բնապահպանական ռիսկերն ու ազդեցությունները:
- Նկարագրել հստակ քայլեր, գործընթացներ, ընթացակարգեր և մեթոդաբանություններ՝ ԲՄ պահանջների, ռիսկերի և ազդեցությունների գնման, վերանայման և վերահսկման համար:
- Սահմանել ԲՄ ռիսկերի, ազդեցությունների և համապատասխանության կառավարման, վերահսկման, զեկուցման և մշտադիտարկման համար պատասխանատուներ:
- Ապահովել խորհրդակցությունների և տեղեկատվության բացահայտման շրջանակ, ինչպես նաև մշակել ԲՄ մեղմացման ծրագրեր բացասական ազդեցությունները նվազեցնելու համար:
- Գնահատել կարողությունները և առաջարկել կարողությունների զարգացման միջոցառումներ:

ԲՄԿՇ-ի առաջնային նպատակն է ուղղորդել ԲՄ ռիսկերի նույնականացումը, գնահատումը և մեղմացումը: Այն սահմանում է ազդեցության մեղմացման միջոցառումները և ապահովում է կարգավորող պահանջներին և Համաշխարհային բանկի (ՀԲ) Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին (ԲՄՍ) համապատասխանությունը:

Շրջանակը նաև ապահովում է մոնիտորինգի և հաշվետվությունների մեխանիզմներ, նպաստում է շահակիրների ներգրավվածությունը և երաշխավորում է, որ բողոքների լուծման մեխանիզմները գործեն ազդակիր համայնքների համար :

Բացի այդ, այն ուղղորդում է նաև տեղանքին հատուկ ԲՄ գործիքների պատրաստմանը, ինչպիսիք են ՇՄ և սոցիալական ազդեցության գնահատումները (ՇՄՄԱԳ), Բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունները (ԲՄՈւ), Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները (ԲՄԿՊ), Մշակութային ժառանգության կառավարման ծրագրերը (ՄԺԿԾ) ինչպես նաև ծրագրի գործունեության ռիսկերի դիտագնման և նույնականացման գործիքները:

Բաղադրիչ 2-ի շրջանակներում իրականացվող աշխատանքները, ներառյալ շինարարական աշխատանքները. ենթակառուցվածքների վերականգնում և կառուցում, բնության տուրիզմի զարգացման փոքրածավալ գործողությունների համար կգործարկվեն 8 ԲՄՄ-ներ

ԲՄՄ 1. ԲՄ ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում – Շինարարական աշխատանքների իրականացումը ենթադրում է ԲՄ ռիսկեր և ազդեցություններ, որոնք պետք է գնահատվեն, մեղմացվեն, կառավարվեն և վերահսկվեն:

ԲՄՄ 1-ը կիրառելի է կլաստերների հետ կապված բոլոր գործողությունների համար:

ԲՄՄ 2. Աշխատանք և աշխատանքային պայմաններ. Ծրագրի կապալառուները պետք է ունենան աշխատուժի կառավարման քաղաքականություններ, բնապահպանական, սոցիալական առողջության և անվտանգության քաղաքականություններ և վարքագիծ: Նրանք պետք է ապահովեն աշխատողների համար անվտանգ և առողջ աշխատանքային պայմաններ:

ԲՄՄ2-ը կիրառելի է աշխատողի և գործատուների միջև բոլոր տեսակի հարաբերությունների համար:

ԲՄՄ 3. Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում և կառավարում. Նախքան շինարարական աշխատանքները սկսելը պետք է գնահատվի օդի, ջրի և հողի հնարավոր աղտոտվածությունը, մշակվեն կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումներ, որոնք կմշտադիտարկվեն շինարարական աշխատանքների ընթացքում:

ԲՄՄ3-ը կիրառելի է բոլոր կլաստերների համար ենթակառուցվածքի վերականգնման բոլոր գործողությունների համար:

ԲՄՄ 4. Համայնքի առողջություն և անվտանգություն. Առողջության և անվտանգության ռիսկերն ու ազդեցությունները ծրագրի ազդակիր համայնքների վրա պետք է դիտարկվեն և հասցեագրվեն՝ խուսափելով կամ նվազագույնի հասցնելով նման ռիսկերն ու ազդեցությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին:

ԲՄՄ4-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման բոլոր գործողությունների համար բոլոր կլաստերների բոլոր ազդակիր համայնքներում:

ԲՄՄ 5. Հողերի օտարում, հողօգտագործման սահմանափակում և հարկադիր տարաբնակեցում. Տարաբնակեցման ազդեցությունները պետք է գնահատվեն և, հնարավորության պարագայում խուսափեն դրանից: Եթե հարկադիր տարաբնակեցումն անխուսափելի է, ապա այն նվազագույնի կհասցվի, և ազդակիր անձանց վրա բացասական ազդեցությունները մեղմելու համար մանրակրկիտ կալանավորվեն և կիրականացվեն համապատասխան միջոցառումներ: ԲՄՄ5-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման բոլոր գործողությունների համար, ինչպիսիք են ազդեցություն մասնավոր սեփականության վրա, հարկադիր տարաբնակեցում և մասնավոր հողերի մշտական և/կամ ժամանակավոր օգտագործում:

ԲՄՍ6. Կենսաբազմազանության պահպանում եւ կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում. Կենսաբազմազանության և կենդանի բնական ռեսուրսների վրա ազդեցությունները մանրակրկիտ կգնահատվեն և կմշակվեն ազդեցությունը նվազագույնի հասցնելու միջոցներ:

ԲՄՍ6-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման այն գործողությունների համար, որոնք կիրականացվեն բնակելի և գյուղատնտեսական տարածքներից դուրս, բնական միջավայրում կամ շրջակայքում, ինչպիսիք են անտառները, պահպանվող տարածքները և բարձրադիր վայրերը:

ԲՄՍ8: Մշակութային ժառանգություն. Մշակութային ժառանգության վրա ազդեցությունները պետք է գնահատվեն և պաշտպանվեն ծրագրի իրականացման ողջ ցիկլի ընթացքում:

ԲՄՍ8-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման այն գործողությունների համար, որոնք կիրականացվեն որպես մշակութային ժառանգություն պահպանվող տարածքներում և/կամ մշակութային հուշարձանների մոտ:

ԲՄՍ10: Շահակիրների ներգրավում եւ տեղեկատվության հանրայնացում. Ծրագրի շահակիրները պետք է նույնականացվեն Ծրագրի իրականացման հենց սկզբից: Ծրագրի համար պատրաստվել է առանձին ՇՆՊ, որը մանրամասնում է, թե ինչպես պետք է շահակիրներին նույնականացնել, խորհրդատվություն տրամադրել, քննարկումներին ներգրավել՝ Ծրագրի բնապահպանական և սոցիալական կայունության ապահովման և հաջող իրականացման գործում նշանակալի ներդրում ունենալու նպատակով:

ԲՄՍ10-ը կիրառելի է կլաստերի հետ կապված բոլոր գործողությունների համար:

ԶՄԵԾ-ի ԲՄ ռիսկի ընդհանուր վարկանիշը դասակարգվում է որպես Էական, որը պահանջում է մանրակրկիտ կառավարում նախագծի ողջ ցիկլի ընթացքում:

Բնապահպանական ռիսկերը ներառում են հողի էրոզիան և դեգրադացումը, աղմուկի և օդի աղտոտումը, կենսաբազմազանության ռիսկերը, թափոնների կառավարման խնդիրները: Հողի դեգրադացումը կանխելու համար կիրականացվեն էրոզիայի դեմ պայքարի և հողային ռեսուրսների վերականգնման միջոցառումներ և տեխնիկա: Օդի աղտոտվածությունը կկառավարվի փոշենստման, տրանսպորտային միջոցների արտանետումների վերահսկման, աղմուկի դեմ կառավարումը՝ բնակելի թաղամասերում շինարարության ժամանակային սահմանափակման և տեխնիկայի խլացուցիչների միջոցով: Կենսաբազմազանության ռիսկերը կկառավարվեն պահպանվող տարածքների պահպանման, խախտված բուսականության վերատնկման և էկոլոգիայի զգայուն շրջաններում պահպանության միջոցառումների կիրառման միջոցով: Թափոնների կառավարման պլանները կապահովեն վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնների, ներառյալ ասբեստ պարունակող նյութերի պատշաճ հեռացումը:

ԶՄԵԾ-ի հետ կապված սոցիալական ռիսկերը ներառում են հողի ձեռքբերում և տարաբնակեցում, աշխատանք և աշխատանքային պայմաններ, համայնքի առողջություն և անվտանգություն, ինչպես նաև մշակութային ժառանգության ազդեցությունները: Տարաբնակեցման Շրջանակը (ՏՇ) կիրականացվի՝ ապահովելու համար արդար փոխհատուցում և ապրուստի վերականգնում տուժած անձանց համար: Աշխատանքի կառավարման ընթացակարգերը (ԱԿԸ) կիրագործվեն՝ պաշտպանելու աշխատողների իրավունքները, աշխատանքային առողջությունը և անվտանգության չափանիշները: Երթևեկության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

կառավարման միջոցառումներ, տեղանքի անվտանգության արձանագրություններ և արտակարգ իրավիճակների արձագանքման պլաններ կկիրառվեն՝ համայնքի առողջությունն ու անվտանգությունը ապահովելու համար: Մշակութային ժառանգությունը պաշտպանելու համար կընդունվեն «Գտածոների հայտնաբերման ընթացակարգերը»՝ շինարարության ընթացքում պատմական և հնագիտական վայրերին վնաս պատճառելուց խուսափելու համար:

ԲՄԿՇ-ն համահունչ է Հայաստանի ԲՄ իրավական դաշտին՝ ներառելով Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը, Աշխատանքային օրենսգրքը, թափոնների կառավարման օրենքը, պատմության և մշակութային անշարժ Հուշարձանների և մշակութային ժառանգության պահպանման մասին օրենքը, Քաղաքաշինության օրենքը և Ջրային օրենսգրքը: Այն նաև հետևում է ՀԲ-ի ԲՄԿ-ին՝ ապահովելով համապատասխան ԲՄՄ-ների հետ համապատասխանությունը: ԲՄԿՇ-ի իրականացման ինստիտուցիոնալ պարտականությունները վերապահված են Հայկական տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏՁՀ), Զբոսաշրջության կոմիտեին (ԶԿ) և համապատասխան պետական մարմիններին:

ԲՄԿՇ-ի ներկայիս նախագիծը կհրապարակվի ՀՏՁՀ-ի վեբ կայքի միջոցով և տպագիր տարբերակով հասանելի կլինի մարզպետարաններում՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Դրա շուրջ խորհրդակցություններ կիրականացվեն համապատասխան պետական և ոչ պետական կառույցների հետ: ԾՄՄԱԳ-ների և ԲՄԿՊ-ների նախագծերը պետք է ուղարկվեն ՀԲ՝ վերանայման և հաստատման համար: Բանկի կողմից հաստատումը ստանալուց հետո ՀՏՁՀ-ն կհրապարակի ԾՄՄԱԳ-ը կամ ԲՄԿՊ-ն ազդակիր համայնքում: ԲՄԿՊ-ի նախագիծը կտեղադրվի ՀՏՁՀ-ի և ազդակիր համայնքի վեբկայքերում՝ հայտարարություն տեղադրելուց հետո 10 օրվա ընթացքում համայնքում կայանալիք ՀԲ(հանրային քննարկում) հանդիպման մասին հայտարարությամբ: ՀԲ-ից հետո Ծրագրի թիմը վերջնական տեսքի կբերի ԲՄԿՊ-ի նախագիծը՝ կցելով ՀԲ-ի արձանագրությունը և համայնքից ստացված պահանջվող փաստաթղթերը. տեղեկանքները թափոնների հեռացման վայրի մասին, համայնքի համաձայնությունը համայնքի հողերում ծրագրի իրականացման վերաբերյալ և հետագայում շինարարության թույլտվություն: Թարմացված ԲՄԿՊ-ն կուղարկվի Բանկ՝ վերանայման համար, կվերանայվի, վերջնական հաստատում ստանալուց հետո կհրապարակվի ՀՏՁՀ-ի կայքում:

ՀԲ-ի գործընթացի մանրամասն գրառումը կպահվի: Բոլոր անցկացված հանդիպումների արձանագրությունները կկազմվեն՝ ներառելով օրակարգը, բարձրացված հարցերը, մասնակիցների ցանկը, ամսաթիվը և վայրը: Անձնական տվյալները հասանելի կլինեն միայն ներքին օգտագործման համար:

Շինարարության կապալառուների և վերահսկող կազմակերպությունների կողմից ղեկավարվող հանրային քննարկումներ կշարունակվեն շինարարության փուլում, և կլինեն հետևողական քննարկումների, դաշտային այցելությունների, ոչ պաշտոնական քննարկումների և գրավոր նամակների ընթացքում բարձրացված ԲՄ խնդիրներին և ստացված բողոքներին: Արձանագրությունները կպահվեն ՀՏՁՀ գրասենյակում և հասանելի կլինեն ՀԲ-ին:

ԲՄԿՇ-ի իրականացման և մշտադիտարկման ընթացքում կիրառվելու է կառուցվածքային մոտեցում, ներառյալ՝ (i) ԲՄ կարգավորում և ռիսկի դասակարգում ենթաձրագրերի համար, (ii) տարածքի հատուկ ԲՄ գործիքների մշակման գործընթաց, (iii) ԲՄԿՇ-ի և տարածքի հատուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԲՄ գործիքների վերաբերյալ համարժեք տեղեկատվության հրապարակում և խորհրդատվություն՝ ապահովելու համար թափանցիկություն և որոշումների կայացում, (iv) կանոնավոր մշտադիտարկում և վերահսկողություն ՀՏԶ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, և (v) շահակիրների համար կարողությունների զարգացման նախաձեռնություններ:

Կարողությունների զարգացման ծրագրերը կանցկացվեն տարբեր շահակիրների համար, ներառյալ՝

- Պայմանագրային ԲՄ մասնագետներ՝ իրենց հմտություններն ու գիտելիքները բարելավելու համար բնապահպանական, սոցիալական, առողջապահություն և անվտանգություն հարցերի վերաբերյալ՝ տարածքին հատուկ ԲՄԿՊ-ների, ՏՇ-ների (եթե այդպիսիք պահանջվում են) հաջող իրականացման համար;
- ՀՏԶ-ի ինժեներներ, ներկայացնելու տեղամասին հատուկ ԲՄԿՊ-ներ և ՏՇ-ներ
- Կարողությունների զարգացման ծրագրեր հետաքրքրված կողմերի համար՝ զբոսաշրջության զարգացման միտումների, ղեկավարության և այլն:

Այս գործողությունների ընդհանուր արժեքը՝ ԲՄԿՇ-ի իրականացման համար՝ նախագծի առաջին 18 ամիսների ընթացքում կազմում է 203,500 դոլար: Գնահատումը հիմնված է գնումների պլանի վրա, որը ներառում է հինգ ենթածրագրերը: ԲՄԿՇ-ի իրականացման միջոցով ԶՄԵԾ-ն նպատակ ունի հասնել Էկոլոգիապես կայուն և սոցիալական տեսանյունից ընդգրկող զբոսաշրջության զարգացմանը ապահովելով բնական և մշակութային ժառանգության պահպանությունը և բարելավելով համայնքների բարեկեցությունը: Շրջանակը նաև խթանում է կլիմայական կայունությունը, բնական աղետների ռիսկերի նվազեցմանը, թափանցիկ որոշումների կայացմանը և շահակիրների ներգրավվածությանը, ինչը կնպաստի Հայաստանում երկարաժամկետ կայուն զբոսաշրջության աճին:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զբոսաշրջության եւ մարզային ենթակառուցվածքների ծրագիրը (ԶՄԵԾ) կաջակցի Արենիի, Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Գյումրիի, Ջերմուկի ու Եղեգիսի յոթ առաջնահերթ կլաստերներում կայուն, ներառական և կլիմայական ինչպես նաև բնական աղետների հանդեպ ճկուն զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներին և միջամտություններին: Հիմնական միջամտություններն ուղղված են կլաստերներից յուրաքանչյուրում զբոսաշրջության զարգացման հիմնական սահմանափակումների վերացմանը, ներառյալ հիմնական և որակյալ ենթակառուցվածքների և ծառայությունների բացակայության հարցի լուծումը, ինչպես նաև առաջարկները դիվերսիֆիկացնելու և ՀՀ կառավարության կլաստերային մոտեցման ներքո բացահայտված համապատասխան հիմնական խորշերը զարգացնելու անհրաժեշտությունը: Առաջարկվող Ծրագիրը նաև կհետևի և կհիմնվի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ընթացիկ ծրագրի (ՏՏԵԶԾ) շրջանակներում իրականացվող ներդրումների, փորձի և քաղված դասերի վրա:

Զբոսաշրջության կոմիտեն (ԶԿ), որը գտնվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) ներքո, ծառայում է որպես երկրում զբոսաշրջության զարգացման և խթանման մանդատ ունեցող առաջնային պետական գերատեսչություն: Իր այս ներուժով ԶԿ-ն կարևոր դեր կխաղա ծրագրի շրջանակներում ներդրումների որոշմանը և ձևակերպմանն աջակցելու գործում և կհանդիսանա ԷՆ-ն ներկայացնող գլխավոր գործընկերը, որը պատասխանատու է Ծրագրի համակարգման և քաղաքականության աջակցության համար: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶ) ծառայելու է որպես Ծրագրի իրականացման գործակալություն: ՀՏԶ-ն պատասխանատու կլինի ծրագրի բոլոր գործողությունների և ֆինանսական պարտականությունների կատարման համար, ներառյալ գնումների ընթացակարգերի և ֆինանսական կառավարումը, շրջակա միջավայրի և սոցիալական (ԲՍ) մշտադիտարկումն, ինչպես նաև տեխնիկական գնահատման, նախագծման և շինարարական աշխատանքների հետ կապված բոլոր պարտականությունները, ներառյալ աշխատանքների վերահսկումը, մշտադիտարկումը և գնահատում (Մ&Գ) և հաշվետվողականությունը:

ԶՄԵԾ Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակը (ԲՍԿԾ) համապարփակ գործիք է, որը նախատեսված է ապահովելու, որ ԲՍ նկատառումները համակարգված կերպով ինտեգրված են լինեն Ծրագրի պլանավորման, նախագծման, իրականացման և մշտադիտարկման համակարգում: Այս շրջանակը համահունչ է Համաշխարհային բանկի Բնապահպանական և սոցիալական շրջանակին (ԲՍԾ) և համապատասխան ազգային կանոնակարգերին: Այս ԲՍԿԾ-ի ներդրմամբ՝ ԶՄԵԾ-ն նպատակ ունի հասնել կայուն զարգացման արդյունքների, որոնք շրջակա և միջավայրի համար մաքուր են և սոցիալական առումով ներառական՝ դրանով իսկ նպաստելով ընդգրկված համայնքների ընդհանուր բարեկեցությանը:

ԲՍԿԾ-ն Ծրագրի անձնակազմին և այլ օգտվողներին ուղղորդում է ԲՍ գնահատումների պահանջների, համապատասխան մեղմացնող միջոցառումների մշակման և իրականացման,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
ինչպես նաև ենթածրագրերի տարբեր փուլերում ազգային օրենքների և Համաշխարհային
բանկի Բնապահպանական և սոցիալական ստանդարտների (ԲՄՍ) հետ
համապատասխանության ապահովման վերաբերյալ: Այն ներառում է ստուգաթերթերի
նմուշներ ԲՍ սրբինինգային հետազոտության համար, ուրվագծեր՝ տեղանքին հատուկ
պլանների պատրաստման համար և դաշտային մշտադիտարկման ձև:

Այն նաև նկարագրում է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գործող ԲՍ
կանոնակարգերը և չափորոշիչները, որոնք վերաբերում են Ծրագրին և հղում է անում
տեղական և ազգային մակարդակների հաստատություններին, որոնք պատասխանատու են
թույլտվությունների, լիցենզիաների տրամադրման և բնապահպանական չափանիշներին
համապատասխանությունը պարտադրելու համար:

Այս ԲՄԿԾ-ն գործում է Ծրագրի համար պատրաստված այլ պլանների հետ համատեղ,
ներառյալ Շահակիրների ներգրավման պլանը (ՇՆՊ), Տարաբնակեցման շրջանակը (ՏՇ) և
Աշխատանքի կառավարման ընթացակարգերը (ԱԿԸ):

3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ծրագրի բաղադրիչները

ԶՄԵԾ-ը բաղկացած է չորս ինտեգրված բաղադրիչներից, որոնք միասին կնպաստեն կլիմայական առումով դիմացկուն ենթակառուցվածքների հասանելիության բարելավմանն՝ ի շահ տեղական համայնքների և այցելուների, բարձրացնելով ընտրված վայրերի գրավչությունը, հնարավորություն տալով ստեղծել աշխատատեղեր և ավելացնելով տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության հատվածի ներդրումը:

Բաղադրիչ 1 – «Ինտեգրված եւ կայուն կլաստերի զարգացման խթանումը» կֆինանսավորի տեխնիկական աջակցությունը (SU), խորհրդատվական ծառայությունները, ապրանքներն ու սարքավորումն ի թիվս այլոց, և առնչվող վերլուծական և տեխնիկական ուսումնասիրությունների աշխատանքները՝ կլաստերի զարգացման ծրագրերի (ԿԶԾ) մշակման և իրականացման համար: ԿԶԾ-երը կօգնեն դեկավարել ինտեգրված և կայուն զարգացումը և կներառեն կլաստերի ընդհանուր տեսլականը 10-ամյա պլանավորման հորիզոնում, ներառյալ զարգացման մանրամասն պլանները, որոնք ներառում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ կապիտալացնելու յուրաքանչյուր կլաստերի զբոսաշրջության զարգացման ներուժը և աշխատանքի ստեղծումը: ԿԶԾ-երը կհաստատվեն Ծրագրի կառավարման կոմիտեի (ԾԿԿ)¹ կողմից և կծառայեն որպես ուղեցույց՝ համապատասխան կլաստերների ներքո միջամտությունների առաջնահերթության համար, ներառյալ դրանց ընդհանուր կառավարումը, ինչպես նաև շահագործման ու պահպանման դրույթները: Այս բաղադրիչով նախատեսվում են տեխնիկական աջակցության հետևյալ հիմնական գործողությունները, որոնք ներառում են.

(ա) Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Ջերմուկի և Եղեգիսի ԿԶԾ-երի մշակումը և վերջնականացումը, որը կհաստատվի ԾԿԿ-ի կողմից²: ԿԶԾ-երը նաև հաշվի կառնեն կանաչ, ճկուն և ներառական զարգացման մոտեցումները, քաղաքային և տարածքային պլանավորումը և համապատասխանությունը գործող մարզային և համայնքային զարգացման ծրագրերին: Պահանջարկի գնահատումը և տնտեսական վերլուծությունը կիրականացվեն որպես ԿԶԾ մշակման մաս, և կլաստերների զարգացման առաջնահերթությունները կընտրվեն տեղական համայնքների, բիզնեսի և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ մասնակցային մոտեցումների միջոցով: ԿԶԾ-երը կընդգրկեն կլիմայական առումով զգայուն գործողությունների պլաններ, որոնց միջոցով կլաստերների համար կընտրվեն ցածր ածխածնի առաջացմամբ և

¹ ԾԿԿ-ն նախագահում է փոխվարչապետը, ԾԿԿ նկարագրությունը ներկայացված է «Բաժին III. Ծրագրի իրականացում» հատվածում:

² Արենիի ԿԶԾ-ն մշակվել է ՏՏԵԶԾ-ի շրջանակներում, իսկ պոտենցիալ ներդրումները նախագծվելու են ԶՄԵԾ-ի շրջանակներում, երբ ծրագիրը մեկնարկի: Գյումրու համար ԶՄԵԾ-ն կօգտագործի արդեն մշակված գոյություն ունեցող ռազմավարությունները և զարգացման ծրագրերը, և նոր ԿԶԾ չի մշակվի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
հարմարվողական ներդրումների տարբերակներ³ : ԿԶԾ-երը նաև նպատակ կունենան առավելագույնի հասցնել կլաստերների շրջանակում զբոսաշրջության և առնչվող ոլորտներում զբաղվածության ներուժը: ԿԶԾ-երի առաջնահերթ միջամտությունները կիրականացվեն Բաղադրիչ 2-ի շրջանակներում:

(բ) Կլիմային և աղետներին դիմակայուն գոտիավորման և գլխավոր պլանների, ներդրումների պլանավորման ուսումնասիրությունների և այլ վերլուծական աշխատանքների պատրաստում (օրինակ՝ տեխնիկատնտեսական հիմնավորումները), որոնք անհրաժեշտ են ԿԶԾ-երի պատրաստման, մշակման և վերջնական տեսքի բերելու համար:

(գ) Հանրային իրազեկման արշավներ և առնչվող քաղաքացիների ներգրավման գործողություններ ԿԶԾ-ների պատրաստման ընթացքում և դրանից հետո՝ խթանելու տեղական սեփականության իրավունքը, հազեցնելու ապագա քաղաքային և տարածքային պլանավորումը տեղեկություններով, աջակցելու որոշումների կայացմանը:

(դ) Ընտրված զբոսաշրջային ակտիվների և մշակութային ժառանգության վայրերի համար տեղամասի կառավարման և/կամ գործառնական և սպասարկման պլանների մշակում՝ աջակցելու բնական, մշակութային և սոցիալական ակտիվների մշտադիտարկմանը և պահպանմանը՝ երկարաժամկետ կայուն գործունեության և զբոսաշրջային ակտիվների կառավարման համար:

(ե) Հարցումների և զբոսաշրջության տվյալների հավաքագրման այլ գործողությունների իրականացում անանուն տեղեկատվության հավաքագրման նպատակով՝ տեղեկություններով համալրելու տեղական զբոսաշրջության վիճակագրությունը զբոսաշրջության շահագրգիռ կողմերի միջոցով, ինչպիսիք են Զբոսաշրջության կոմիտեն, Ուղղությունների կառավարման գրասենյակները (ՈԻԿԳ) և զբոսաշրջության այլ շահագրգիռ կողմերը:

(զ) Աջակցություն Արենի, Դիլիջան, Եղեգիս և Ջերմուկ կլաստերներում ՈԻԿԳ-ների ստեղծմանը և/կամ գործունեությանը՝ դասընթացների և ներուժի զարգացման, ապրանքների և սարքավորումների տրամադրման միջոցով:

(է) Առաջնորդների վերապատրաստման միջոցառումներ և զբոսաշրջության արժեքային շղթայում կանանց տեղական մասնակցության խթանում՝ որոշումներ կայացնող մարմիններում առաջնորդի դեր ստանձնելու համար, այդ թվում՝ Ծրագրի շրջանակներում Տեղական աշխատանքային խմբերում (ՏԱԽ)⁴ ներկայացվածության ընդլայնման միջոցով, ինչպես նաև աջակցություն կանանց՝ անհրաժեշտ կարողությունների զարգացման և հմտությունների ընդլայնման միջոցով:

Բաղադրիչ 2 – «Աջակցություն կլիմայական առումով ճկուն ենթակառուցվածքներին և տեղական տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցության խթանում» բաղադրիչը նպատակ ունի վերացնել

³ Տես նաև Բաժին IV. Ծրագրի գնահատման ամփոփում: Ծրագրի գնահատման փաստաթղթում Փարիզի համաձայնագրի հետ ներդաշնակեցում:

⁴ ՏԱԽ-երի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Բնաստիտուցիոնալ և իրականացման միջոցառումները» բաժին III. Ծրագրի իրականացում:

ԿԶԾ-երով հայտնաբերված հիմնական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև մարզային զբոսաշրջության զարգացման տեսակետից ծառայությունների բացերն առաջնահերթ յոթ կլաստերներում: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների ընտրությունը կհիմնվի 1-ին բաղադրիչի ներքո մշակված և վերջնականացված ԿԶԾ-երի վրա: Այս բաղադրիչը կֆինանսավորի ինժեներական, տեղանքի և այլ տեխնիկական գնահատումները, տեխնիկատնտեսական հիմնավորումները (SSՀ), ճարտարապետական և մանրամասն ինժեներական նախագծերը և շինարարական աշխատանքները: Բաղադրիչը ներառում է հետևյալ ենթաբաղադրիչները.

Ենթաբաղադրիչ 2.1. «Ենթակառուցվածքների և ծառայությունների վերականգնում և արդիականացում» ենթաբաղադրիչը կֆինանսավորի խորհրդատվական և շինարարական աշխատանքները՝ կատարելով միջամտություններ ուղղված հիմնական ենթակառուցվածքների բարելավմանը և քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, կենսունակության բարձրացմանը և զբոսաշրջային վայրերի և հարակից տարածքների հասանելիության բարելավմանը: Ամբողջ ենթակառուցվածքը նախագծվելու և ներդրվելու է կլիմայական և աղետների ռիսկերին, այդ թվում՝ երկրաշարժերին դիմակայելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության նորմերին շինարարական

չափանիշներին հաշվի առնելով համաշխարհային լավագույն փորձը: Բաղադրիչի շրջանակներում ներդրումները կներառեն, բայց չեն սահմանափակվի հետևյալով⁵.

(ա) Ճանապարհների և տրանսպորտի հետ կապված ենթակառուցվածքների որակի և վիճակի բարելավում, ներառյալ կանաչ և էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցներ այլընտրանքային ձևերի (օրինակ՝ հասարակական տրանսպորտի համակարգեր, ինչպիսիք են ճոպանուղիները, էլեկտրական ավտոբուսները, հեծանիվները և այլն) խթանումը: Այս գործունեությունը կներառի ճանապարհների և կամուրջների կառուցում, վերականգնում / բարելավում և / կամ սպասարկում, հետիոտնային գոտիների ընդլայնում, փողոցների ձևավորում և լուսադիոդային լուսավորության տեղադրում և կանաչ ենթակառուցվածքի այլ տարրերի օգտագործում՝ կլիմայական առումով ճկունության ապահովման և փողոցների, մոտեցնող ճանապարհների և ավտոկայանատեղերի գրավչության բարելավման նպատակով: Ներդրումները նախագծված կլինեն ազգային չափանիշներին համապատասխան և հաշվի կառնեն հաշմանդամության ներառման գլոբալ լավագույն փորձը, ինչպես նաև կլիմայի և աղետների դիմակայունության բարելավումը (օրինակ՝ հեղեղումների մեղմացման և էրոզիայի վերահսկման միջոցառումների ներդրում): Բարելավումները կներառեն նաև հասարակական փոխադրամիջոցները՝ բարելավելու մուտքը դեպի զբոսաշրջային վայրեր, կայանատեղիները և հետիոտների հետ կապը՝ խրախուսելով մուտքը դեպի հիմնական տեսարժան վայրեր առանց շարժիչի փոխադրամիջոցներով:

(բ) Հիմնական ենթակառուցվածքների և ծառայությունների արդիականացում և քաղաքային ենթակառուցվածքների վերականգնում, ներառյալ առկա տեղական ջրամատակարարման բարելավումը. կոյուղու համակարգերի, կեղտաջրերի հավաքման և հեռացման համակարգերի

⁵ Յուրաքանչյուր կլաստերում միջամտությունների հնարավոր ցանկը և դրանց պատրաստվածությունը ներկայացված է Հավելված 2-ում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
վերականգնում և արդիականացում և բարելավումներ՝ հեղեղաջրերի պատշաճ կառավարման
համար:

Ենթաբաղադրիչը նաև կաջակցի հեռահաղորդակցության ենթակառուցվածքի
վերականգնմանը և/կամ արդիականացմանը՝ տեղական համայնքների և
ձեռնարկությունների թվային հասանելիությունն ու կապը բարելավելու համար:

(գ) Հասարակական վայրերի և տարածքների գրավչության բարձրացում, ներառյալ կանաչ
տարածքների վերականգնումը և/կամ ընդլայնումը, հանրային պարկի բարելավումը,
փողոցների կանաչապատումը և համապատասխան քաղաքային հարմարությունների
ապահովումը՝ զբոսաշրջային բավարար փորձին համապատասխանելու համար:

(դ) Զբոսաշրջությանն առնչվող ենթակառուցվածքների և ծառայությունների տրամադրում,
ներառյալ զբոսաշրջային հարմարությունների կառուցումը կամ վերականգնումը, ինչպիսիք են
ուղղությունների կառավարման գրասենյակները և թանգարանները, և մշակութային
ժառանգության արժեքների պահպանումն ու բարելավումը: Հարմարությունների
վերականգնման առումով գերապատվություն կտրվի էներգաարդյունավետության
բարելավմանը, և բոլոր նորակառույց շենքերը կհամապատասխանեն
էներգաարդյունավետության չափանիշներին, որոնք առնվազն համահունչ են Առավել
արդյունավետ չափանիշներով գերազանցության նախագծին (1) (EDGE-մակարդակ):
Նախագծերը կներառեն նաև թափոնների նվազեցման նկատառումներ՝ օգտագործելով ցածր
ածխածնային նյութեր և բարձրացնելով ջրի օգտագործման արդյունավետությունը:

ե) Աջակցություն Հանրային-մասնավոր ներդրումներին (ՀՄՆ), որը ներառում է մասնավոր
ներդրումներ ներգրավելու նպատակով լրացուցիչ հանրային ենթակառուցվածքների
բարելավման ապահովում: Այս գործունեությունը կապահովի հանրային ենթակառուցվածքներ,
որոնք անհրաժեշտ են առևտրային ներդրումների կենսունակությունը ապահովելու համար,
ինչպիսիք են նոր կամ վերականգնված հարակից հանրային օբյեկտները, ճանապարհներն ու
փողոցները, ջուրը և սանիտարական համակարգը և հեռահաղորդակցությունը⁶: Հիմնվելով
մասնավոր հատվածի կազմակերպությունների ցուցաբերած հետաքրքրության և
հանձնառության վրա՝ այս գործունեությունը նպատակաուղղված կլինի նպաստել ավելի լայն
տնտեսական զարգացման և առևտրային ներդրումների կուտակման բարենպաստ միջավայրին:

ՀՄՆ ներդրումների բացահայտման, ընտրության և մշակման հատուկ ընթացակարգերը
կներկայացվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿՁ):

**ԿԶԾ-երի վերջնականացումը նախապայման չէ Բաղադրիչ 2-ի շրջանակներում
գործողություններ սկսելու համար:** Մինչ ԿԶԾ-երը պատրաստվում են, բաղադրիչ 2-ի համար
իրավասու ենթաձրագրերի տեսակը սահմանափակվում է ներդրումներով, որոնք շահավետ
կլինեն համայնքի և զբոսաշրջության զարգացման համար՝ անկախ ԿԶԾ-ի վերջնական
արդյունքներից, այսինքն՝ ներդրումների հետ կապված «ոչ մի ավտոսանք» չի կարող լինել:
Հնարավոր «առանց ավտոսանքի» ներդրումները նկարագրված են Հավելված 2-ում:

⁶ Առաջարկների ներկայացումը, ընտրության ընթացակարգերը և հաստատման չափանիշները կհստակեցվեն Ծրագրի
կառավարման ձեռնարկում:

Ենթաբաղադրիչ 2.2. Մասնավոր հասվածի մասնակցության խթանումը, մասնագիտական հմտությունների բարձրացումը և աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը (5 մլն ԱՄՆ դոլար) կֆինանսավորի խորհրդատվական ծառայությունները կլաստերների առաջնական և տեղական տնտեսական զարգացման և զբոսաշրջության ոլորտում տեղական

ընկերությունների և անհատների մասնակցության խթանման նպատակով: Առաջարկվող գործողությունները կներառեն.

(ա) Բրենդինգի, շուկայավարման և խթանման գործողություններ զբոսաշրջության արժեքային շղթայում:

(բ) Հանրային մասնավոր համագործակցության (ՀՄՀ) խթանում, ներառյալ ԿԶԾ-երի շրջանակներում բացահայտվող պոտենցիալ կենսունակ ՀՄՀ-ների գնահատումը, նախագծումը և պատրաստումը, օրինակ՝ զբոսաշրջության հետ կապված հասարակական տրանսպորտի համակարգերի շահագործման և պահպանման երկարաժամկետ պայմանավորվածությունների անհրաժեշտությունը (օրինակ՝ Դիլիջանում քննարկվող ճոպանուղու համակարգի առաջարկը):

(գ) Զբոսաշրջության և առնչվող բիզնեսում ներգրավված տեղացի աշխատողների համար HoReCa (հյուրանոց, ռեստորան և սննդի ծառայություններ) ոլորտում մասնագիտական հմտությունների զարգացումը՝ առաջնահերթություն տալով խոցելի և անապահով խմբերին (օրինակ՝ կանայք, երիտասարդները և խոցելի խմբերը, որոնք կարող են չունենալ անհրաժեշտ հմտություններ, ֆինանսական հնարավորություններ և աշխատանքային հնարավորություններ): Մա կներառի նաև զբոսաշրջության ոլորտի մասնագետների թիրախային թվով մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

(դ) Աշխատանքի վայրում ուսուցում (օրինակ՝ ռեստորանային և խոհարարական ուսուցում) և ֆորմալ ուսուցում (օրինակ՝ HoReCa սերտիֆիկացման ծրագրեր), որոնք պետք է մշակվեն և իրականացվեն ոլորտում ակտիվ ընտրված գործընկերների հետ⁷:

(ե) Տեղական զբոսաշրջային ընկերությունների և ձեռնարկատերերի համար դասընթացների և կարողությունների զարգացման այլ միջոցառումների իրականացում, որոնք ներառում են կանանց նախաափրությունները, կարիքները և նախագծային ներդրումները՝ մասնակցային գեղերային ընդգրկուն գործընթացի միջոցով:

(զ) Ուսումնասիրությունների և վերլուծական աշխատանքների մշակում՝ նախագծելու, աջակցելու իրականացմանը և/կամ մշտադիտարկելու գործողությունները՝ զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծումը կլաստերների շրջանակներում խթանելու նպատակով, ներառյալ պոտենցիալ միջամտությունների բացահայտումը, որոնց Ծրագիրը կարող է սատարել:

(է) Թվային գործիքների մշակում և/կամ առաջխաղացում, ինչպիսիք են ծրագրային հավելվածները, օրինակ՝ տրանսպորտի տարբերակների, իրադարձությունների, փառատոների օրացույցների, մատչելի հարմարությունների, արշավային արահետների և տուր կազմակերպիչների մասին՝ իրական ժամանակում տեղեկատվություն տրամադրելու համար:

⁷ Տե՛ս «Ծրագրի նկարագրությունը» ենթաբաժինը «Ե. Գործընկերների դերը»՝ գործընկերների հետ առաջարկվող լրացուցիչ գործողությունների և մասնագիտական ու վերապատրաստման ծրագրեր տրամադրելու վերաբերյալ մանրամասների համար:

Բաղադրիչ 3 - Ծրագրի կառավարման և գործառնական աջակցության (4,5 մլն ԱՄՆ դոլար) բաղադրիչը կֆինանսավորի ծրագրի կառավարման ընդհանուր ծախսերը՝ կապված գործառնական գործունեության, խորհրդատվական ծառայությունների, ոչ խորհրդատվական ծառայությունների, տրանսպորտային միջոցների, ապրանքների և հաղորդակցության, իրագրեկման և վերապատրաստումների ծախսերը: Այն կֆինանսավորի ծրագրի իրականացման գործակալության ծախսերը կապված կառավարման գործառնականների հետ և կապահովի, որպեսզի Ծրագիրը համապատասխանի Բանկի պահանջներին՝ կապված բնապահպանական, սոցիալական, ֆինանսական, աուդիտի և տեխնիկական չափորոշիչների հետ, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման խորհրդատվական ընկերության ծախսերը՝ աջակցելու և ընդլայնելու իրականացնող գործակալության առկա ՄԳ համակարգերի կարողությունները: Բաղադրիչը նաև նպատակ ունի ընդլայնել ծրագիրն իրականացնող գործակալության՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարողությունները՝ վերապատրաստման և գիտելիքների փոխանակման միջոցառումների միջոցով:

Բաղադրիչ 4 - Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ (ԱԻԱԲ). Զրո դոլար արժողությամբ այս բաղադրիչը թույլ կտա արագորեն վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները հրատապ կարիքների համար աղետի (երկրաֆիզիկական, կլիմայական կամ տեխնաձին) կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակների դեպքում: Նման իրադարձությունները կարող են ներառել ջրհեղեղներ, երկրաշարժեր, երաշտներ և հիվանդությունների բռնկում: ԱԻԱԲ-ի համար համաձայնեցված գործարկիչը հնարավորություն կտա վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները Ծրագրի այլ բաղադրիչներից՝ աջակցելու անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին: Իրավասու գործողությունների ցանկը կհստակեցվի ԱԻԱԲ ձեռնարկում, որը պետք է պատրաստվի նախքան Ծրագրի արդյունավետությունը, և հատկացումները կիրականացվեն կարևորագույն ապրանքների, շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների դրական ցուցակի դիմաց, որոնք անհրաժեշտ են անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին աջակցելու համար:

3.2. Ծրագրի կլաստերները

Ծրագիրը ներառում է 7 կլաստեր՝ Արենիի, Դիլիջանի, Դվինի, Եղեգիսի, Գորիսի, Ջերմուկի և Գյումրու:

Արենիի կլաստեր

Արենիի կլաստերն առանձնանում է Հայաստանի առաջատար ուղղությունների շարքում՝ շնորհիվ իր ռազմավարական աշխարհագրական դիրքի, հարուստ մշակութային ժառանգության և յուրահատուկ բնական լանդշաֆտի: «Տարեկան ավելի քան 500,000 այցելուներ ընդունող Արենին ավելի է նշանավորվել 6,000 տարեկան գինու գործարանի հայտնաբերումից հետո, ինչը Նորովի կյանքի է կոչել Հայաստանի գինու մշակույթ: Արենիի կլաստերի հայեցակարգը մշակվել է ընթացիկ ՏՏԵԶ ծրագրի շրջանակներում և հաստատվել է Կառավարության ներդրումային կոմիտեի կողմից սահմանվել են հետևյալ ներդրումները ծրագրի շրջանակներում հնարավոր ընդգրկման համար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ճանապարհների և փողոցների ցանցերի վերականգնում՝ Արենիի կենսունակությունը բարելավելու և հիմնական տեսարժան վայրերի և զբոսաշրջային վայրերի հասանելիությունը բարելավելու նպատակով:

Հյուրընկալության ոլորտի (HORECA) վերապատրաստում և զբոսաշրջության զարգացման ծրագրեր՝ տեղացի երիտասարդների հմտությունների բացը վերացնելու համար:

Արշավային արահետների ցանցերի զարգացում և նոր ճամբարային վայրերի ստեղծում՝ բնության զբոսաշրջության գործունեությունը հեշտացնելու համար

Թանգարանների և մշակութային կենտրոնների հիմնում/վերականգնում՝ տարածաշրջանի պատմությունը, մշակույթը և ժառանգությունը ցուցադրելու համար:

Գյումրու կլաստեր

Գյումրին, լինելով Հայաստանի երկրորդ մեծ քաղաքը, ունի հարուստ քաղաքային ժառանգություն և կենսունակ տեղական մշակույթ: Տարեկան ավելի քան 100,000 այցելուներ ունենալով քաղաքը հայտնի է իր գեղարվեստական ժառանգությամբ և ավանդական արհեստագործությամբ: ՏՏԵԶԾ-ի շրջանակներում իրականացվող ներդրումները բարելավել են քաղաքային և զբոսաշրջային ենթակառուցվածքները՝ հիմք դնելով քաղաքային շուկան աշխուժացնելու, մասնագիտական ուսուցման հաստատություններ հիմնելու և ստեղծագործական արդյունաբերության խթանման ապագա նախաձեռնությունների համար: Հնարավոր միջամտությունների կենտրոնը լինելու է տեղական և տարածաշրջանային մասնագիտական կրթության և ծառայությունների որակի բարձրացմանն աջակցելը: Հնարավոր գործունեությունները կարող են ներառել.

- Գյումրու շուկայի վերականգնում՝ շուկայի մշակութային ժառանգությունը պահպանելու համար տարածքը վերականգնելու և վերօգտագործելու նպատակով, թույլ տալով ավելի լավ կազմակերպել, օգտագործողների փորձը և հետիոտնային հոսքը և ստեղծել նոր ուղղություն:

- Նախկին վիրաբուժական հիվանդանոցի շենքի վերանորոգում և վերակառուցում («Գյուլբենկյան» պատմական շենք)՝ Ecole hôtelière de Lausanne միջազգային վկայական ծրագրի մասնաճյուղը հյուրընկալելու համար. առաջին միջազգային հյուրընկալության կրթական կենտրոնը Հայաստանում, որը արտոնագրվելու է EHL Hospitality Business School-ի կողմից:

- Արհեստավորների դպրոցի հիմնում. հայկական ավանդական արհեստագործությունը պահպանելու և աշխուժացնելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով Գյումրիի հատուկ արվեստներին և արհեստներին, մինչև ժամանակ խթանելով նորարարությունն ու կայուն բիզնես մոդելները՝ երիտասարդ սերունդներին սովորելու և ձեռք բերված կարիերան պահպանելու մոտիվացիա ապահովելու համար:

Դիլիջանի կլաստեր

Դիլիջանը հպարտանում է դարավոր պատմական ժառանգությամբ և գտնվում է Հայաստանի զբոսաշրջային լանդշաֆտում որպես բնության և մշակույթի կենտրոն: Տարեկան մոտավորապես 250,000 այցելուներով Դիլիջանի ռազմավարական դիրքը՝ որպես Հայաստանի և Վրաստանի միջև տրանսպորտային հանգույց, ներկայացնում է զբոսաշրջության զգալի ներուժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
Կլաստերի զարգացումը կախված է քաղաքային կապի բարելավումից, անվտանգ հետիոտնային գոտիների ստեղծմամբ և հասարակական տարածքների աշխուժացումից: Հնարավոր գործողությունները կարող են ներառել.

- Ներքաղաքային կապի և ճանապարհային ենթակառուցվածքի վերականգնում:

- Քաղաքի գլխավոր գետի (Աղստն գետ) աղտոտվածության նվազեցում և վարարումների ռիսկի նվազեցման ներդրումներ, ինչպիսիք են հենապատերի ամրացումը և բարձրացումը, գետափի որոշ հատվածների վերականգնման բնական լուծումներ՝ տեղական բուսականության վերատնկման և ջրահեռացման համակարգերի բարելավման և շինարարության միջոցով: հետիոտնային կամուրջներ՝ դեպի հարակից Դիլիջանի քաղաքային այգի մուտքը բարելավելու համար:

- Ճոպանուղու կառուցում, որը կկապի է Դիլիջան քաղաքի կենտրոնը Թախտա թաղամասի հետ՝ նվազեցնելով երթևեկության գերբեռնվածությունը՝ միաժամանակ բարելավելով կապը և հասանելիությունը քաղաքի ողջ տարածքում:

- Փողոցների ձևավորում և հետիոտնային գոտիների, զբոսաշրջային երթուղիների ստեղծում:

- Հասարակական և կանաչ տարածքների ընդլայնում.

Դվինի կլաստեր

Դվինը գտնվում է Արտաշատի համայնքում, այն հարուստ է մշակութային և պատմական տեսարժան վայրերով, որտեղ դեռևս շարունակվում են հնագիտական ուսումնասիրությունները: Որպես մշակութային զբոսաշրջության կենտրոն՝ Դվինը նպատակ ունի գրավել այցելուներին, որոնք խոր հետաքրքրություն ունեն հնագիտության հանդեպ: Ներդրումներ են առաջարկվում բարելավվելու զբոսաշրջային ենթակառուցվածքները, ներառյալ մուտքի կետերը, ճանապարհները, հետիոտնային գոտիները, լուսավորությունը, ցուցանակները և այցելուների հոսքի կառավարումը: ՏՏԵԶԾ-ի շրջանակներում մշակվել են հրատապ վերականգնողական աշխատանքների և թանգարանների կառուցման մանրամասն ճարտարապետական և ինժեներական նախագծեր: Հնարավոր գործողությունները կարող են ներառել.

- Դվինի պատմական հուշարձանների և հնագիտական տարածքի մասնակի վերակառուցում:

- Թանգարանի շենքի կառուցում, որտեղ կլինի նաև հնագիտական հետազոտական կայան:

Ջերմուկի կլաստեր

Ջերմուկը Վայոց ձորի մարզի զբոսաշրջային երեք կլաստերներից մեկն է՝ Արենիի և Եղեգիսի հետ միասին, որոնք ներառված են Զբոսաշրջության կլաստերի ռազմավարության մեջ: Պատմականորեն այն բժշկական զբոսաշրջության հայտնի վայր է իր հանքային ջրերի և բարենպաստ կլիմայի շնորհիվ: Քաղաքում կան ավելի քան 40 հանքային աղբյուրներ, հանքային ջրերի շշպցումը նույնպես տեղի է ունենում քաղաքում: Այսօր այն շարունակում է մնալ հանրաճանաչ սպա քաղաք, որը գրավում է ինչպես միջազգային, այնպես էլ ներքին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
զբոսաշրջիկների՝ տարեկան շուրջ 200,000 զբոսաշրջային հոսքով: Ջերմուկում ՏՏԵԶԾ-ի
շրջանակներում երկու պատրաստի նախագծված ենթաձրագրերն են

- Ընդլայնարահի և հարակից ենթակառուցվածքների վերակառուցում:
- Ջերմուկի ջրվեժի մոտեցման ճանապարհի և արահետների վերականգնում, կամրջի, մայթերի կառուցում և զբոսաշրջության բարելավում:
- Կլաստերի հետագա զարգացումը լրացվելու է <<փափուկ>> ներդրումների միջոցով, ինչպիսիք են Ջերմուկը որպես միջազգային առողջակարան դիտարկելը և մարքեթինգն և գովազդները:

Գործիսի կլաստեր

Հայաստանի և Իրանի միջև գտնվող Գործիսը առանցքային պատմամշակութային ուղղություն է: Հարավային Հայաստան այցելող զբոսաշրջիկների կողմից սիրված Գործիսը վերակենդանացնելու աշխատանքներ է տարվել ՏՏԵԶԾ-ի շրջանակներում՝ ներկայացնելով մշակութային ժառանգությունն ու բնական գրավչությունները: Հնարավոր ներդրումները կաորդ են լինել.

- Ժառանգության կենտրոնի վերանորոգում, տների և ճակատների վերականգնում և մշակութային միջավայրի պահպանում:

Ապագա միջամտությունները որոշելիս կքննարկվեն նաև շրջակա բնակավայրերի համախմբումը միասնական բրենդային ինքնության ներքո՝ թեմատիկ տեսարժան վայրերով և տարածաշրջանի պատմական և բնական տեսարժան վայրերը: ***Եղեգիսի կլաստեր***

Կլաստերն ու մերձակա բնակավայրերը նշանակալի ներուժ ունեն զբոսաշրջության զարգացման համար, հատկապես հաշվի առնելով ներկա գլոբալ ճանապարհորդական միտումները, որոնք միտված են բնական միջավայրեր և անխախտ լանդշաֆտներ փնտրելուն՝ կատարյալ քայլարշավի և դահուկային սպորտի համար: Այս բնութագրերը հատկապես գրավիչ են բնություն սիրող և արկածախնդիր զբոսաշրջիկների համար: Ավելին, Եղեգիսը հարուստ է մշակութային և պատմական հուշարձաններով, այդ թվում՝ հին մոնումենտներով և միջնադարյան կառույցներով, որոնք հատկապես հետաքրքրում են մշակութային ժառանգության սիրահար զբոսաշրջիկներին, հատկապես՝ Եվրոպայից: Հնարավոր ներդրումները կուղղվեն.

- Ճանապարհների, հետիոտնային և զբոսաշրջային արժեքի ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև պատմական և մշակութային հուշարձանների վերականգնման և պահպանման վրա:

Նախաձեռնությունների աջակցելուն, որոնք ուղղված են մշակութային միջոցառումների, փառատոների և ցուցահանդեսների խթանմանը, որոնք ընդգծում են Հայաստանի հարուստ ժառանգությունն ու ավանդույթները՝ ողջ տարվա ընթացքում գրավելով զբոսաշրջիկներին:

4. ԲՄԿՇ ՄՈՏԵՑՈՒՄԸ

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ

4.1. ԲՄԿՇ մոտեցում և մեթոդաբանություն

ԲՄԿՇ-ն ծառայում է որպես`

• Համակարգված կերպով բացահայտելու և կառավարելու ԲՄ ռիսկերը:

• Ապահովելու, որ ծրագրի գործողությունները համապատասխանեն ԲՄ գործող օրենքներին, կանոնակարգերին և միջազգային ստանդարտներին:

• Նպաստել կայունությանը և նվազագույնի հասցնել բացասական ԲՄ ազդեցությունները:

• Տրամադրել ուղեցույցներ ՇՆՊ-ի և բողոքների լուծման մեխանիզմների համար:

Գործընթացը սկսվում է նախագծի դիտազննմամբ ու ռիսկերի դասակարգմամբ` հնարավոր ԲՄ ազդեցությունները պարզելու համար: Այս նախնական փուլում հայտնաբերվում են զգայուն տարածքները, ինչպիսիք են պաշտպանված էկոհամակարգերը կամ խոցելի համայնքները, և ռիսկերը դասակարգվում են որպես ցածր, միջին, նշանակալի կամ բարձր:

Ռիսկերի նույնականացումից հետո հաջորդ փուլում իրականացվում է մանրամասն ԲՄ գնահատում: Այս գնահատումը ներառում է հնարավոր ազդեցությունների վերլուծություն և անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունների իրականացում, ինչպիսիք են Շրջակա միջավայրի և Սոցիալական ազդեցությունների գնահատում (ՇՄՍԱԳ) կամ Բնապահպանական և Սոցիալական Ուսումնասիրություն (ԲՍՈՒ): Այս ուսումնասիրությունները գնահատում են նախագծի ուղղակի, անուղղակի և համակցված ազդեցությունները` կենտրոնանալով կենսաբազմազանության, հողօգտագործման, ջրային ռեսուրսների և համայնքների բարեկեցության վրա:

Գնահատումից հետո մշակվում են մեղմացման միջոցառումներ` հայտնաբերված ռիսկերն ու ազդեցությունները նվազեցնելու համար: Մեղմացման ռազմավարությունը առաջնորդվում է կանխարգելման աստիճանավորմամբ` շեշտադրելով հնարավորինս ազդեցությունների խուսափումը, նվազեցումը, վերականգնումը, ինչպես նաև մնացորդային ազդեցությունների փոխհատուցումը: Այս միջոցառումները ներառվում են տեղամասային Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանի (ԲՄԿՊ) մեջ, որտեղ հստակ սահմանվում են գործողությունները, պատասխանատուները և իրականացման ժամկետները:

Մեթոդաբանության կարևոր բաղադրիչ է շահակիրների ներգրավվածությունը (ՇՆ) և հանրային քննարկումները, որոնք ապահովում են թափանցիկությունն ու ներգրավվածությունը նախագծի ողջ իրականացման ընթացքում: Շահակիր կողմերը, ներառյալ տեղական համայնքները, պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները, ներգրավվում են հանրային քննարկումներին: Հավաքագրված կարծիքները վերլուծվում և հաշվի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
են առնվում, իսկ բողոքների և խնդիրների արդյունավետ կարգավորման համար ստեղծվում է
Բողոքարկման Մեխանիզմ (ԲՄ):

4.2 ԲՄԿՇ Հիմնավորում և Նպատակ

ԲՄԿՇ մշակելու հիմնավորումը ԶՄԵԾ-ի հետ կապված ԲՄ ռիսկերն ու ազդեցությունները կառավարելու կառուցվածքային շրջանակ ապահովել է: Թեև Ծրագրի համար կան նախապես ընտրված վայրեր, Ծրագրի իրականացման ընթացքում կհստակեցվեն շինարարական աշխատանքների համար նախատեսված բուն վայրերը, որի առնչությամբ կընդգծվի ԲՄԿՇ պատրաստելու նպատակահարմարությունը՝ ազգային կանոնակարգերի, Համաշխարհային բանկի ԲՄԿ-ի և Միջազգային Արդյունաբերության Լավ Գործելակերպի (ՄԱԼԳ) համապատասխանությունը յուրաքանչյուր տեղամասում ապահովելու առումով:

ԲՄԿՇ-ի նպատակն է ուղղորդել իրականացնող կազմակերպությանը Ծրագրի համապատասխան բաղադրիչներն իրականացնելիս՝ ազգային և տեղական կանոնակարգերի և Համաշխարհային բանկի՝ ԶՄԵԾ-ին առնչվող ԲՄՄ-ների համապատասխանության պահպանմանը: ԲՄԿՇ-ի հիմնական նպատակներն են՝

- Գնահատել ծրագրի և դրա գործունեության հնարավոր շրջակա միջավայրային և սոցիալական և ռիսկերն ու ազդեցությունները:
- Սահմանել հստակ քայլեր, գործընթացներ, մեթոդաբանություններ և ընթացակարգեր ԲՄ պահանջների, ռիսկերի և ազդեցությունների գնման, վերանայման և մշտադիտարկման համար:
- Որոշել վերահսկողության, կառավարման, հաշվետվությունների ներկայացման և ԲՄ ռիսկերի, ազդեցությունների ու համապատասխանության մշտադիտարկման դերերն ու պատասխանատվությունները:
- Տրամադրել խորհրդատվությունների և տեղեկատվության հրապարակման շրջանակ, ինչպես նաև մշակել ԲՄ մեղմացման պլաններ՝ բացասական ազդեցությունների հասցեագրման համար:
- Գնահատել կարողությունները և առաջարկել կարողությունների զարգացման միջոցառումներ:

Սույն ԲՄԿՇ-ի շրջանակը ներառում է.

- (i) ԲՄ կանոնակարգը և Ծրագրին առնչվող օրենքները,
- (ii) Իրականացման միջոցառումները և ինստիտուցիոնալ շրջանակը,
- (iii) Ծրագրի գործողությունների ԲՄ սքրինինգային ընթացակարգերը.

(iv) Ընթացակարգեր և ուղեցույցներ՝ ըստ անհրաժեշտության, տեղամասին հատուկ շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՄԱԳ) իրականացման և տեղանքին հատուկ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանների (ԲՄԿՊ) պատրաստման համար,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
(v) ԲՄ ռիսկերը և մեղմացման միջոցառումները,

(vi) ԲՄ մշտադիտարկման և հաշվետվությունների համար ինստիտուցիոնալ միջոցառումները, ներառյալ շինարարության կապալառուների, վերահսկման խորհրդատուների, ինչպես նաև ՀՏԶՀ-ի և ԶԿ-ի կողմից հաշվետվություններ ներկայացնելը,

(vii) Շահակիրների ներգրավման ընթացակարգերը:

ԲՄԿԾ-ն հստակեցնում է Ծրագրին առնչվող անապահով և խոցելի խմբերը և նախանշում է տարբերակված միջոցառումներ՝ ապահովելու, որպեսզի նրանք չառերեսվեն անհամաչափ վնասների և ունենան հավասար հասանելիություն Ծրագրի օգուտներից:

ԲՄԿԾ-ն հիմնված է ԲՄ վերլուծության վրա, ներառյալ առաջնային հետազոտությունն առաջարկվող կլաստերներում, որոնք բացահայտում են հիմնական բնապահպանական զգայուն ընկալիչները, սոցիալական ելակետային վիճակը, նպաստառուների բնութագրերը, պոտենցիալ ազդեցության ենթակա մարդիկ, ինչպես նաև Ծրագրի գործունեության արդյունքում աղքատության ավելացման ու սոցիալական հնարավոր հետևանքները:

4.3 ԲՄԿԾ-ն պոտենցիալ կիրառողներ

Այս ԲՄԿԾ-ն կօգտագործվի՝

- Կառավարության և հանրության, ծրագրի իրականացման (PIA) մասնագետների,
- Ոչ պետական կազմակերպությունների
- Ծրագրի ազդակիր համայնքի և անձանց
- Տեղական իշխանությունների կողմից:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐ

5.1. Ազգային իրավական դաշտ

Բնական ռեսուրսների օգտագործումը, ԲՄ պաշտպանությունը և հարակից այլ ոլորտները կարգավորող բնապահպանական և սոցիալական իրավական դաշտը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, ազգային օրենքներից, իրավական ակտերից և միջազգային պայմանագրերից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995, վերջին անգամ փոփոխվել է 2015 թ.)

Հոդված 12-ը՝ «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը», սահմանում է, որ պետությունը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, բարելավմանը և վերականգնմանը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով ապագա սերունդների առջև ստանձնած պատասխանատվությունը: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանման մասին:

ԶՄԵԾ-ին առավել առնչվող մի քանի օրենքներ ամփոփ ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 1. Հայաստանի համապատասխան իրավական դաշտը

| Օրենսգրքեր, օրենքներ, որոշումներ | Նկարագրությունը եւ առնչությունը Ծրագրի գործունեությանը |
|--|--|
| Հողային օրենսգիրք (2001թ, վերջին փոփոխությունը 2022թ) | <p>Հողային օրենսգիրքը սահմանում է պետական հողերի կառավարման և օգտագործման հիմնական ցուցումները, ներառյալ տարբեր նպատակներով հատկացվածները, ինչպիսիք են՝ գյուղատնտեսության, քաղաքաշինության, արդյունաբերության և հանքարդյունաբերության, էներգիայի արտադրության, հաղորդակցության և կապի գծերը, տրանսպորտը և այլ նպատակները: Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև անտառապատ, ջրածածկ և պահպանվող հողերը: Այն նաև սահմանում է հողի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավունքները հողի նկատմամբ:</p> <p>Ցանկացած տեսակի ժամանակավոր կամ մշտական հողատարածք, որը կարող է պահանջվել Ծրագրի իրականացման համար, կիրականացվի հողային օրենսգրքի համաձայն:</p> |
| Ջրային օրենսգիրք (2002թ, վերջին փոփոխությունը 2022թ) | <p>Ջրային օրենսգրքի հիմնական նպատակն է իրավական հիմք ստեղծել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային</p> |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| | |
|--|--|
| <p>փոփոխությունը 2022թ)</p> | <p>կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանության ապահովման համար: Ջրային օրենսգիրքն անդրադառնում է հետևյալ հիմնական խնդիրներին. պետական/տեղական իշխանությունների և հասարակության պարտականությունները, Ջրի ազգային քաղաքականության (2005) և Ջրի ազգային ծրագրի (2006) մշակման, ջրի կադաստրի և մոնիթորինգի համակարգի, համապատասխան տեղեկատվության հանրային հասանելիության, ջրի օգտագործման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվության համակարգերի, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման, ջրի որակի ստանդարտների, հիդրոտեխնիկական կառույցների շահագործման անվտանգության հարցերին, ջրային ռեսուրսների պահպանությանն ու պետական վերահսկողությանը:</p> <p>Ծրագրի հնարավոր ներդրումները ջրամատակարարման և կեղտաջրերի հավաքման համակարգերի վերականգնման համար կնախագծվեն և կիրականացվեն Ջրային օրենսգրքին համապատասխան: Օրենսգիրք դրույթները նաև հաշվի կառնվեն ցանկացած այլ գործունեություն պլանավորելիս և ձեռնարկելիս, որը կարող է ազդեցություն ունենալ երկրում ջրի քանակի և որակի վրա:</p> |
| <p>Անտառային օրենսգիրք (2005թ, վերջին փոփոխությունը 2022թ)</p> | <p>Օրենսգիրքը կարգավորում է անտառների կայուն կառավարման՝ Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի պահպանության, վերականգնման, անտառապատման և ռացիոնալ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:</p> <p>Օրենսգրքի դրույթները պետք է հաշվի առնվեն այն դեպքում, երբ ԶՄԵԾ-ն ներառում է գործողություններ անտառային տարածքներում կամ անտառային հողերում կամ շրջակայքում:</p> |
| <p>Քաղաքացիական օրենսգիրք (1998թ, վերջին փոփոխությունը 2023թ)</p> | <p>Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների իրավական կարգավիճակը, սեփականության և գույքային այլ իրավունքների ձեռքբերման և իրականացման հիմքը, ինչպես նաև կարգավորում է պայմանագրային և այլ պարտավորությունները, ինչպես նաև հարակից գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները: ԶՄԵԾ-ի իրականացման ընթացքում կարող են առաջանալ մի շարք հարցեր՝ կապված հողօգտագործման իրավունքների հետ:</p> <p>Օրենքի կարգավորումները ծառայում են որպես «հովանոց» և պետք է դիտարկվեն Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում՝ քաղաքացիական և իրավական հարաբերությունների համատեքստում:</p> |
| <p>Աշխատանքային օրենսգիրք (2004թ, վերջին փոփոխությունը 2023թ)</p> | <p>Աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների հաստատման, փոփոխման և դադարեցման սկզբունքները և նախանշում դրանց իրականացման ընթացակարգերը: Այն նաև սահմանում է աշխատանքային հարաբերություններում ներգրավված կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունն, ինչպես նաև աշխատողների անվտանգության և առողջության ապահովման պայմանները: Աշխատանքային օրենսգրքի բոլոր կարգավորումները կկիրառվեն Ծրագրի անձնակազմի, ինչպես նաև Ծրագրում տարբեր փուլերում ներգրավված կապալառուների, ենթակապալառուների և խորհրդատուների անձնակազմի նկատմամբ:</p> |

| | |
|---|---|
| <p>Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության մասին օրենք (2014թ, վերջին փոփոխությունը 2023թ)</p> | <p>«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը (ՇՄԱԳ) իրավական հիմք է ապահովում պլանավորված միջոցառումների և հայեցակարգերի պետական փորձաքննության իրականացման և ներդրման համար, ինչպես նաև ներկայացնում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի ստանդարտ քայլերը Հայաստանում տարբեր նախագծերի և գործողությունների համար: Նախատեսված գործողությունները դասակարգվում են երկու կատեգորիայի՝ արտացոլելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տարբեր մակարդակներն՝ ըստ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների ծանրության:</p> <p>Օրենքը նախատեսում է դրույթներ, որոնք անմիջականորեն առնչվում են հանգստի և զբոսաշրջության ոլորտին: Մասնավորապես «Փորձաքննության ենթակա գործունեությունը» 3-րդ գլխում օրենքը թվարկում է ՇՄԱԳ-ի ենթակա նախատեսվող միջոցառումների տեսակները: Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն լեռնադահուկային գծերի, ճոպանուղիների, զիփ գծերի և ենթակառուցվածքների կառուցումը կամ վերակառուցումը դասակարգվում է որպես Բ կատեգորիա:</p> <p>Ի լրումն, ՇՄԱԳ-ը կիրառելի է նաև պահպանվող տարածքներում, անտառներում, պատմական հուշարձանների տարածքներում և հանրային կանաչ տարածքներում իրականացվելիք գործողությունների համար, որոնք թվարկված չեն «Փորձաքննության ենթակա գործողություններ» 3-րդ հոդվածում: Այս գործունեությունը պատկանում է Բ կատեգորիայի:</p> <p>ԶՄԵԾ-ի շրջանակներում իրականացվելիք աշխատանքները կարող են ներառել գոյություն ունեցող ենթակառուցվածքների և մուտքի ճանապարհների նոր կառուցում և/կամ վերակառուցում, Դիլիջան ազգային պարկի ռեկրեացիոն գոտում գործունեություն և այլն, որոնք, համաձայն ՇՄԱԳ-ի օրենքի, պահանջում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձագիտական եզրակացության տրամադրում:</p> <p>Ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունները կուսումնասիրվեն և կդասակարգվեն՝ որոշելու օրենքի կիրառելիությունը: Նախքան պետական ՇՄԱԳ-ի և փորձաքննության ենթակա շինարարական աշխատանքների մեկնարկը պետք է տրվի դրական ՇՄԱԳ և փորձաքննության եզրակացություն:</p> |
| <p>Հողերի օգտագործման պահպանման նկատմամբ վերահսկողության մասին օրենք (2008թ, վերջին փոփոխությունը 2020թ)</p> | <p>Օրենքը նախատեսում է ՀՀ հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման նպատակներն ու տեսակները, հողային օրենսդրության և հիմնարկների կիրարկման հետ կապված ստուգումները, վերահսկողության կարգը, հողօգտագործումը և պահպանությունը վերահսկող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքը տարածվում է ՀՀ հողային ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականությունից և/կամ օգտագործման իրավունքից:</p> |
| <p>Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության</p> | <p>Օրենքը նկարագրում է հողերի օտարման և փոխհատուցման ընթացակարգերը, թվարկում է այն նախագծերի տեսակները, որոնք հիմնավորված են հանրային գերակա շահի հայտարարման համար և օտարման ընթացակարգերը: Օրենքը սահմանում է, որ գույքի օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի գույքի սեփականատիրոջը, սակայն չի պահանջում, որ տնտեսական և սոցիալական</p> |

| | |
|--|--|
| <p>օտարման մասին օրենք (2006թ, վերջին փոփոխությունը 2018թ)</p> | <p>անբարենպաստ ազդեցությունները մեղմվեն հողի փոխհատուցումից բացի: Օրենքի դրույթը կկիրառվի այնպես, ինչպես նշված է Ծրագրի ՏՇ-ում:</p> |
| <p>Թափոնների մասին օրենք (2004թ, վերջին փոփոխությունը 2015թ)</p> | <p>Օրենքը կարգավորում է իրավատնտեսական հարաբերությունները՝ կապված հավաքագրման, փոխանցման, պահպանման, զարգացման, ծավալների կրճատման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման հետ: Օրենքը սահմանում է թափոնների գործածության օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, պետական ստանդարտացման, վիճակագրական տվյալների գույքագրման և ներդրման սկզբունքները, դրանց պահանջների և մեխանիզմների իրականացումը, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների ներկայացման պահանջները, պետական մոնիթորինգի համար թափոնների քանակի նվազեցմանն ուղղված միջոցառումները, այդ թվում՝ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թափոնների օգտագործմամբ մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցումը, ինչպես նաև պահանջները, պետական մոնիթորինգի և իրավական խախտումները: Օրենքը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ որպես իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Թափոնների մասին օրենքը կկարգավորի ԶՄԵԾ-ի իրականացման ընթացքում առաջացած ավելցուկային նյութական և շինարարական թափոնների հեռացումը: Այս օրենքը կկիրարկվի Ծրագրի կողմից ֆինանսավորվող ֆիզիկական աշխատանքների ընթացքում շինարարական թափոնների և ավելցուկային նյութերի հեռացումը պլանավորելիս և ձեռնարկելիս:</p> |
| <p>Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը (1994թ, վերջին փոփոխությունը 2022թ)</p> | <p>Օրենքի նպատակն է ապահովել օդի բարենպաստ որակը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար՝ պաշտպանելով այն աղտոտումից (ինչպես բնական, այնպես էլ մարդածին), մթնոլորտային օդի, կլիմայի և կենսաբազմազանության վրա բացասական ազդեցության վերացումը և կանխարգելումը: Օրենքը նպատակ ունի նաև կարգավորել հասարակական հարաբերությունները օդի պահպանության ոլորտում, կանխել և նվազեցնել մթնոլորտի վրա վնասակար քիմիական և կենսաբանական ազդեցությունները, վերացնել օդի աղտոտվածության անդառնալի հետևանքները, ապահովել օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունն ու մատչելիությունը: Սույն օրենքը կարգավորում է նաև արտանետումների լիցենզիաները և սահմանում է առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները մթնոլորտային օդի աղտոտվածության համար և այլն: ԶՄԵԾ-ի շրջանակներում նախագծման, շինարարության և շահագործման փուլերում մթնոլորտային օդի պահպանման համար Օրենքով սահմանված պահանջներն ու դրույթները պետք է պահպանվեն:</p> |
| <p>Բուսական աշխարհի մասին օրենք (1999թ, վերջին փոփոխությունը</p> | <p>Օրենքը սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերականգնման ոլորտում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի հետազոտության, պետական մոնիթորինգի, պետական գույքագրման նպատակները, բույսերի տեսակների Կարմիր գրքի կազմման</p> |

| | |
|--|--|
| <p>2018թ)</p> | <p>պահանջներն ու մտտեցումները, պայմանները, առանձնահատկությունները, բուսական օբյեկտների նպատակային օգտագործման սահմանափակումները, օգտագործման իրավունքի դադարեցման հիմքերը, բուսական աշխարհի պահպանման վերաբերյալ դրույթներ և տնտեսական խրախուսանք օգտագործման և վերահսկողության իրականացման համար:</p> <p>Այս օրենքը կկիրարկվի, եթե Ծրագիրը ֆիզիկական գործունեության ներդրումներ կատարի բույսերի տեսակների բնական միջավայրերում կամ շրջակայքում կամ այլ կերպ ազդի պահպանվող բուսական աշխարհի վրա:</p> |
| <p>Կենդանական աշխարհի մասին օրենք (2000թ, վերջին փոփոխությունը 2023թ)</p> | <p>Օրենքը սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերականգնման ոլորտում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի հետազոտության, պետական մոնիթորինգի, պետական գույքագրման նպատակները, կենդանիների տեսակների Կարմիր գրքի կազմման պահանջներն ու մտտեցումները, պայմանները, առանձնահատկությունները, կենդանական օբյեկտների նպատակային օգտագործման սահմանափակումները, օգտագործման իրավունքի դադարեցման հիմքերը, կենդանական աշխարհի պահպանման վերաբերյալ դրույթներ և տնտեսական խրախուսանք օգտագործման և վերահսկողության իրականացման համար:</p> <p>Այս օրենքը կկիրարկվի, եթե Ծրագիրը ֆիզիկական գործունեության ներդրումներ կատարի կենդանիների տեսակների բնական միջավայրերում կամ շրջակայքում կամ այլ կերպ ազդի պահպանվող կենդանական աշխարհի վրա:</p> |
| <p>Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք (2006թ, վերջին թորոխությունը 2023թ)</p> | <p>Սույն օրենքը սահմանում է բնության համալիր և առանձին օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմքերը և հարաբերությունները: Օրենքի համաձայն, բնության հատուկ պահպանվող տարածքները բաժանվում են չորս կատեգորիաների. (i) Պետական արգելոցներ. (ii) Ազգային պարկեր; (iii) արգելավայրեր. և (iv) Բնության հուշարձաններ: Բնության հուշարձանների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշմամբ: Չորրորդ կատեգորիան բաժանված է երեք առանձին տեսակի՝ միջազգային, հանրապետական և տեղական նշանակության տարածքներ:</p> <p>Այս օրենքին կհետևեն Ծրագրին հարակից պահպանվող տարածքների, հատկապես «Դիլիջան» ազգային պարկի շրջակայքում օրենքով սահմանված ռեժիմների առնչությամբ՝ ապահովելու, որ Ծրագրի շրջանակներում իրականացվող առանձին գործողությունները համապատասխանեն այդ պահպանվող տարածքների համար սահմանված կառավարման արձանագրություններին:</p> |
| <p>Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005թ, վերջին փոփոխությունը 2020թ)</p> | <p>Օրենքը կարգավորում է ՀՀ բնապահպանական օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության կազմակերպումն ու իրականացումը և սահմանում է ՀՀ-ում վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների և հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության հիմքում ընկած իրավական և տնտեսական հիմքերը:</p> <p>ՇՄԱԳ-ի և փորձաքննության դրական եզրակացության առկայությունը, ինչպես նաև ԶՄԵԾ-ի շրջանակներում նախապատրաստվելիք ՇՄԱԳ փաստաթղթերում ուրվագծված և պահանջվող միջոցառումների իրականացումը, ենթակա կլինեն</p> |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| | |
|--|---|
| | բնապահպանական պետական վերահսկողության: |
| Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին (2005թ, վերջին փոփոխությունը 2023թ) | <p>Սույն օրենքը սահմանում է բուսական և կենդանական աշխարհին բնապահպանական խախտումների հետևանքով պատճառված վնասի հատուցման չափերը, ինչպես նաև այդ սակագների հաշվարկման և հավաքագրման կարգը:</p> <p>Օրենքը պետք է կիրառվի ԶՄԵԾ-ի իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին որևէ վնաս պատճառելու դեպքում:</p> |
| Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենք (2005թ, վերջին փոփոխությունը 2020թ) | <p>Օրենքը կարգավորում է ճանապարհային երթևեկության անվտանգությունը, սահմանում երթևեկության անվտանգության ապահովման Հայաստանի քաղաքականության սկզբունքներն ու ուղղությունները, երթևեկության անվտանգության ապահովման իրավական հիմքերը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և երթևեկության հետ կապված այլ մասնակիցների լիազորություններն ու պարտականությունները:</p> <p>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ու նշանների տեղադրման խնդիրներին անմիջականորեն առնչվող գործունեության իրականացման ընթացքում պետք է դիտարկվեն օրենքի կարգավորումները:</p> |
| Ավտոմոբիլային ճանապարհների մասին օրենք (2006թ, վերջին փոփոխությունը 2020թ) | <p>Օրենքը կարգավորում է ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման և կառավարման տնտեսական, իրավական և կազմակերպչական հիմքերը, ՀՀ-ում ճանապարհների նախագծումը, կառուցումը, վերանորոգումը և սպասարկումը, դասակարգումը և գրանցումն, ինչպես նաև կարգավորում է այդ գործառնություններն իրականացնող մարմինների և կազմակերպությունների իրավահարաբերությունները:</p> <p>Ճանապարհների շինարարության, վերակառուցման և վերականգնման հետ անմիջականորեն առնչվող բաղադրիչի իրականացման ընթացքում պետք է հաշվի առնել օրենքի կարգավորումները:</p> |
| Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների հավասար հնարավորությունների մասին օրենք (2013թ, վերջին փոփոխությունը 2020թ) | <p>Օրենքը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:</p> <p>Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքի դրույթը կիրառվի Ծրագրի իրականացման ընթացքում բոլոր առումներով՝ ապահովելու Ծրագրի բոլոր շահակիրների բովանդակալից մասնակցությունը և Ծրագրի գործունեությունից լիարժեք օգտվելու հնարավորությունն՝ անկախ սեռից:</p> |
| Պատմության | և՛ Սույն օրենքը ապահովում է Հայաստանում նման հուշարձանների |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| | |
|---|--|
| <p>մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք (1998թ, վերջին փոփոխությունը 2023թ)</p> | <p>պահպանության և օգտագործման իրավական և քաղաքական հիմքերը և կարգավորում է պահպանության և օգտագործման գործունեության միջև հարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը, ի թիվս այլ բաների, նկարագրում է հուշարձանների հայտնաբերման և պետական գրանցման, դրանց շուրջ պահպանվող գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: Հոդված 22-ը պահանջում է լիազոր մարմնի (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության դեպարտամենտի) հաստատումը, նախքան հուշարձաններ պարունակող տարածքներում հողատարածքների հատկացումը շինարարական, գյուղատնտեսական և այլ տեսակի գործունեության համար:</p> <p>ՀՀ ֆիզիկական մշակութային ռեսուրսներին վերաբերող Ծրագրի աջակցությամբ իրականացվող բոլոր գործողությունները կիրականացվեն սույն օրենքին լիովին համապատասխան:</p> |
| <p>Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին օրենքը (2009թ, վերջին փոփոխությունը 2018թ)</p> | <p>Օրենքը կարգավորում է ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության, պահպանման և զարգացման գործընթացներից բխող իրավահարաբերությունները, ներառյալ ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացումը, փաստաթղթավորումը, հետազոտությունը, կիրառումը, հանգստացումը, ուսուցումը և տարածումը, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը, Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանումը, միջազգային մշակութային համագործակցությունը, մշակութային հաղորդակցությունը օտար երկրների և ՀՀ ժողովուրդների միջև:</p> <p>Ծրագրի աջակցությամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ռեսուրսներին վերաբերող բոլոր գործողությունները կիրականացվեն սույն օրենքին լիովին համապատասխան:</p> |
| <p>Քաղաքաշինության մասին օրենք (1998թ, վերջին փոփոխությունը 2023)</p> | <p>Սույն օրենքը սահմանում է ՀՀ քաղաքաշինական գործունեության սկզբունքները և կարգավորում այդ գործունեության հարաբերությունները:</p> <p>«Քաղաքաշինության մասին» օրենքը սահմանում է, որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկել իրենց բնակավայրի, գոտիավորման և քաղաքաշինական այլ խնդիրների մասին: Իրազեկման ուղիները պետք է ներառեն հրապարակումներ զանգվածային լրատվության միջոցներում, հանրային քննարկումներ, հաղորդումներ, նախագծերի ցուցադրություն: Ե՛վ ենթակառուցվածքի զարգացման ծրագրերը, և՛ հանրային քաղաքականության/հայեցակարգային փաստաթղթերը ենթակա են հանրային քննարկման, պահանջում են ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծային թույլտվություն) և շինարարության թույլտվություն:</p> |
| <p>Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին օրենքը (2005թ, վերջին փոփոխությունը 2021թ)</p> | <p>Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման գործունեության հիմունքները և կարգավորում անշարժ գույքի գնահատման գործունեության հետ կապված հարաբերությունները:</p> <p>Սույն օրենքի իմաստով գույքի գնահատման օբյեկտներ են համարվում անշարժ գույքը՝ հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսացված ջրային մարմինները, անտառները, բազմամյա բույսերը, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրացված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք չեն կարող առանձնացվել հողամասից՝ առանց գույքին կամ հողամասին վնաս</p> |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| | <p>պատճառելու կամ հանգեցնել դրանց նպատակային նշանակության փոփոխության, դադարեցման կամ հետագա օգտագործման անհնարինության:</p> |
| <p>Տեղեկատվության ազատության մասին օրենք (2015թ)</p> | <p>Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության տրամադրման ոլորտում տեղեկատվության կառավարիչներին, ինչպես նաև տեղեկատվության ստացման կարգը, ձևերն ու պայմանները:</p> <p>Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և նրանց պաշտոնատար անձանց վրա:</p> |
| <p>Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության թիվ 1325-Ն որոշում (2014թ, վերջին փոփոխությունը 2023թ)</p> | <p>Սույն կարգը կարգավորում է հիմնադրությային փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հրապարակային ծանուցման, քննարկումների և լսումների (այսուհետ՝ քննարկումներ) և նախատեսվող գործունեության բոլոր կատեգորիաների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:</p> |
| <p>Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին ՀՀ կառավարության թիվ 1404-Ն որոշում (2017թ)</p> | <p>Սույն որոշմամբ սահմանվում են հողի բերրի շերտի փորման և հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործման նորմերի սահմանման պահանջները՝ ոչ արդյունավետ հողերի բարելավման համար: Սույն որոշումը տարածվում է ՀՀ տարածքում շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների ընթացքում հողի բերրի շերտի փորման և ոչ արդյունավետ հողերի բարելավման նպատակով հողի բերրի շերտի օգտագործման աշխատանքների վրա:</p> |
| <p>Ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգը ու ոչ նյութական մշակութային արժեքի վկայագրի ձևը հաստատելու մասին</p> | <p>Սույն որոշումը սահմանում է հարաբերություններ ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանման և տեղեկատվության փոխանակման բնագավառում: Սույն կարգի դրույթները վերաբերում են ինչպես ՀՀ կառավարության կողմից հաստատված ոչ նյութական մշակութային ժառանգության և անհապաղ պաշտպանության կարիք ունեցող արժեքների ցանկերին, այնպես էլ մշակույթի բնագավառում ՀՀ պետական լիազոր մարմնի մասնագիտական խորհրդի կողմից ճանաչված ոչ նյութական մշակութային ժառանգությանը, արժեքներ, որոնք ենթակա են ներառման ցուցակներում:</p> |

| | |
|---|--|
| ՀՀ կառավարության թիվ 1173-Ն որոշում (2010թ) | |
|---|--|

5.2. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում եւ պետական փորձաքննություն

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության իրավական շրջանակի մշակումը Հայաստանում սկսվել է 1995 թվականին՝ «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: 2014 թվականին օրենքում իրականացվել են փոփոխություններ և այն վերախմբագրվել է: Օրենքի ամբողջական վերախմբագրումն ընդունվել է 2023 թվականի մայիսի 3-ին և ուժի մեջ է մտել 2023 թվականի հունիսի 9-ին:

«ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության պետական լիազոր մարմինն է: Շրջակա միջավայրի գնահատման հաշվետվությունների դիտարկումը, փորձաքննության գործընթացի կազմակերպումը և փորձագիտական եզրակացությունների տրամադրումը կազմակերպվում է ՇՄՆ ենթակայության տակ գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ստորև ներկայացված են 2023 թվականին ընդունված ՀՀ ՇՄԱԳ և փորձաքննության օրենքի դրույթները, որոնք կարող են կիրառելի լինել ՋՄԵԾ-ի կլաստերների և հնարավոր ենթածրագրերի համար: Ըստ Օրենքի նախատեսված գործունեության հիմնադրությամբ փաստաթղթերի և նախագծային փաստաթղթերի գնահատման և փորձաքննության գործընթացները տարանջատվում են:

Ըստ Օրենքի նախատեսվում է հիմնադրությամբ փաստաթղթերի ռազմավարական բնապահպանական գնահատման և փորձաքննության գործընթաց: Գնահատման և փորձաքննության ենթակա պլանային գործունեության տեսակները դասակարգվում են երկու կատեգորիայի Ա և Բ՝ ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի: Ա կատեգորիայի գործունեությունները ծրագրի շրջանակում ֆինանսավորման ենթակա չեն և կմերժվեն:

Բ կատեգորիայի գործունեության համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) պետական գործընթացը սկսվում է ազդակիր համայնքի տեղական կառավարման վարչական գրասենյակին նախատեսվող գործունեության մասին ուղարկված ծանուցումով:

Ծանուցում համայնքին: Համայնքի ղեկավարը ծանուցումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է շահագրգիռ հանրության ծանուցում՝ տեղադրելով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարություն թերթում, համայնքի վեբ կայքում և հայտարարությունների տախտակներին, ծանուցումից հետո՝ ոչ շուտ, քան 21-րդ և ոչ ուշ, քան 25-րդ աշխատանքային օրը:

Ավագանու որոշում: Առաջին հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ավագանին որոշում է ընդունում նախատեսվող գործունեության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու
վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների մասին:

Փորձաքննությունը սկսվում է փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի լրակազմ
փաթեթն էլեկտրոնային տարբերակով նախաձեռնողի կողմից լիազոր մարմին ուղեկցող
գրությամբ ներկայացնելու պահից: Էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու
անհնարինության դեպքում փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի փաթեթը
ներկայացվում է թղթային տարբերակով:

Բ կատեգորիայի գործունեության փաստաթղթերը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննության և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացնելուց հետո
փորձաքննությունը տևում է մինչև 40 աշխատանքային օր: Փորձաքննության փաթեթը ներառում
է ՇՄԱԳ հաշվետվությունը, նախատեսված գործունեության նախագծային փաստաթուղթը,
տեղական ինքնակառավարման մարմնի կողմից նախնական համաձայնության մասին
որոշումը, հանրային լուսմների ընթացքում կազմված փաստաթղթերը (Ծանուցման
հրապարակման պատճենը, լուսանկարները կամ տեսագրությունները, էթե առկա են,
առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ, ինչպես նաև հանրային լուսմների
արձանագրություն՝ մասնակիցների ցանկով: Փորձաքննության ժամկետը լիազոր մարմնի
կողմից կարող է երկարաձգվել մինչև 30 աշխատանքային օր: Ըստ սահմանված կարգի
իրականացվում է երկու հանրային լուսմներ:

ԶՄԵԾ-ի Բաղադրիչ 1-ի շրջանակներում որոշ կամ բոլոր ռազմավարական կամ
հայեցակարգային փաստաթղթերը հնարավոր է ենթակա լինեն ռազմավարական
բնապահպանական գնահատման և փորձաքննության: Այս ընթացակարգերը սահմանված են
Օրենքի 5-րդ և 6-րդ գլուխներում 21-27-րդ հոդվածներում:

Բաղադրիչ 2-ի շրջանակներում ենթակառուցվածքների վերականգնման որոշ
գործողություններ, ինչպիսիք են ճանապարհների վերականգնումը, լուսավորությունը,
ջրատարների տեղադրումը, կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը, թանգարանների,
շենքերի, զիփլայնների, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառապատ
հողերում, բնակավայրերի կանաչ գոտիների վերակառուցումը կամ վերականգնումը
Պատմության և մշակույթի հուշարձանների տարածքներում ենթակա են ՇՄԱԳ և
փորձաքննության՝ համաձայն 12-րդ հոդվածի 4- 6-րդ կետի և դասակարգվում են որպես B
կատեգորիա:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ իրավական դաշտը, ինչպես նաև բնապահպանական և
սոցիալական գնահատման հետ կապված այլ ազգային իրավական ակտերը չեն սահմանում
որևէ ստուգաթերթ կամ ձև, որը պարտադիր է նախնական գնման փուլերի համար:

Հարկ է նաև նշել, որ գործնականում կիրառվում է նաև լիազոր մարմնից (ՀՀ ՇՄՆ
նախարարություն) դիրքորոշում/կարծիք հարցնելու պրակտիկան ցանկացած գործունեության
դասակարգման կամ փորձաքննության անհրաժեշտության վերաբերյալ, որը կարող է կիրառվել
նաև TRIP-ի շրջանակներում որևէ նախաձեռնվող գործունեության դասակարգման համար՝ էթե
առկա են հակասություններ և դժվարություններ:

5.3. Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական շրջանակ

Համաշխարհային բանկի ԲՄՇ-ն (2018) աջակցում է կանաչ, ճկուն և մասնակցային զարգացմանը՝ ուժեղացնելով մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը և կատարելով կարևոր առաջընթաց այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են աշխատանքը, մասնակցությունը և խտրականության բացակայությունը, սեռը, կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանությունը, մշակութային ժառանգությունը, համայնքի առողջությունը և անվտանգությունը և շահակիրների ներգրավվածությունը: ԲՄՇ-ն սահմանում է 10 ԲՄՍ-ներ և խթանում է ԲՄ ռիսկերի ինտեգրված կառավարումը: Ծրագրի գործողությունները պետք է համապատասխանեն ԲՄՇ-ին:

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՉՄԵԾ-ի կողմից գործարկվող 8 ԲՄՍ-ներ, հիմնականում 2-րդ Բաղադրիչի գործողություններով պայմանավորված, որոնք ներառում են հետևյալ շինարարական աշխատանքները. ենթակառուցվածքների վերականգնում և կառուցում, ակտիվ զբոսաշրջության զարգացման փոքրածավալ միջոցառումներ:

Աղյուսակ 3 – ՉՄԵԾ-ի կողմից գործարկվող ԲՄՍ-ներ

| ԲՄՍ | ԲՄՍ-ի նկարագրություն | Կիրառելիությունը ՉՄԵԾ-ի համար |
|---|---|--|
| ԲՄՍ1: Բնապահպանական և սոցիալական ռիսկերի ազդեցությունների գնահատում կառավարում | ԲՄՍ1 ընդունում է Վարկառուի պարտականությունները՝ գնահատելու, կառավարելու և վերահսկելու ԲՄ ռիսկերն ու ազդեցությունները, որոնք կապված են նախագծի յուրաքանչյուր փուլի հետ, որոնց աջակցում է Համաշխարհային բանկը Ներդրումային նախագծերի ֆինանսավորման միջոցով՝ ապահովելու ԲՄ ստանդարտներին համապատասխանություն | Շինարարական աշխատանքների իրականացումը ենթադրում է ԲՄ ռիսկեր և ազդեցություններ, որոնք պետք է գնահատվեն, մեղմացվեն, կառավարվեն և վերահսկվեն: ԲՄՍ1-ը կիրառելի է կլաստերի հետ կապված բոլոր գործողությունների համար: |
| ԲՄՍ2: Աշխատանք և աշխատանքային պայմաններ | ԲՄՍ2-ն կարևորում է զբաղվածության ստեղծումն ու եկամուտների աճը՝ աղքատության նվազեցման և տնտեսական աճի նպատակով: Վարկառուները կարող են խթանել աշխատողների և | Ծրագրի կապալառուները պետք է ունենան աշխատուժի կառավարման քաղաքականություններ, բնապահպանական, սոցիալական առողջության |

| | | |
|---|---|---|
| | <p>կառավարողների միջև առողջ հարաբերությունները և ուժեղացնել ծրագրի զարգացման առավելությունները՝ ցուցաբերելով աշխատողների նկատմամբ արդար վերաբերմունք և ապահովելով անվտանգ ու առողջ աշխատանքային պայմաններ:</p> | <p>և անվտանգության քաղաքականություններ և վարքագիծ: Նրանք պետք է ապահովեն աշխատողների համար անվտանգ և առողջ աշխատանքային պայմաններ: ԲՄՍ2-ը կիրառելի է աշխատողի և գործատուների միջև բոլոր տեսակի հարաբերությունների համար - հիմնական աշխատողների, պայմանագրային աշխատողների, հիմնական մատակարարների համար, որոնք ներգրավված կլինեն Ծրագրի հետ կապված բոլոր գործունեություններում:</p> |
| <p>ԲՄՍ3: Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում և կառավարում</p> | <p>ԲՄՍ3-ը ընդունում է, որ տնտեսական գործունեությունը և քաղաքաշինությունը հաճախ առաջացնում են օդի, ջրի և հողի աղտոտում և սպառում են սահմանափակ ռեսուրսներ, որոնք կարող են վտանգել մարդկային առողջությունը, էկոհամակարգը և շրջակա միջավայրը՝ տեղական, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում: Այս ԲՄՍ-ն սահմանում է պահանջներ՝ ծրագրի իրականացման ընթացքում ռեսուրսների արդյունավետության, աղտոտման կանխարգելման և կառավարման ուղղությամբ:</p> | <p>Նախքան շինարարական աշխատանքները սկսելը պետք է գնահատվի օդի, ջրի և հողի հնարավոր աղտոտվածությունը, մշակվեն կանխարգելիչ և մեղմացող միջոցառումներ, որոնք կմշտադիտարկվեն շինարարական աշխատանքների ընթացքում:</p> <p>ԲՄՍ3-ը կիրառելի է բոլոր կլաստերների համար ենթակառուցվածքի վերականգնման բոլոր գործողությունների համար:</p> |
| <p>ԲՄՍ4: Համայնքի առողջություն և անվտանգություն</p> | <p>ԲՄՍ4 անդրադառնում է առողջության, անվտանգության և</p> | <p>Առողջության և անվտանգության ռիսկերն ու ազդեցությունները</p> |

| | | |
|---|---|--|
| | <p>անվտանգության ռիսկերին և ազդեցություններին ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքների վրա և Վարկառուների համապատասխան պատասխանատվությունը՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու նման ռիսկերն ու ազդեցությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարդկանց, ովքեր իրենց հատուկ հանգամանքների պատճառով կարող են խոցելի լինել:</p> | <p>ծրագրի ազդակիր համայնքների վրա պետք է դիտարկվեն և հասցեագրվեն՝ խուսափելով կամ նվազագույնի հասցնելով նման ռիսկերն ու ազդեցությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին:</p> <p>ԲՄՄ4-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման բոլոր գործողությունների համար բոլոր կլաստերների բոլոր ազդակիր համայնքներում:</p> |
| <p>ԲՄՄ5: Հողերի օտարում, հողօգտագործման սահմանափակում և հարկադիր տարաբնակեցում</p> | <p>ԲՄՄ5-ը ընդունում է, որ պետք է խուսափել հարկադիր տարաբնակեցումից: հարկադիր տարաբնակեցման անխուսափելիության պարագայում ազդեցությունը պետք է նվազագույնի հասցվի և ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ տեղահանված անձանց (և տեղահանվածներին ընդունող հյուրընկալող համայնքների) վրա բացասական ազդեցությունները մեղմելու համար:</p> | <p>Տարաբնակեցման ազդեցությունները պետք է գնահատվեն և, հնարավորության պարագայում խուսափեն դրանից: Եթե հարկադիր տարաբնակեցումն անխուսափելի է, ապա այն նվազագույնի կհասցվի, և ազդակիր անձանց վրա բացասական ազդեցությունները մեղմելու համար մանրակրկիտ կպլանավորվեն և կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:</p> <p>ԲՄՄ5-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման բոլոր գործողությունների համար, ինչպիսիք են ազդեցություն մասնավոր</p> |

| | | |
|---|--|--|
| | | <p>սեփականության վրա, հարկադիր տարաբնակեցում և մասնավոր հողերի մշտական և/կամ ժամանակավոր օգտագործում:</p> |
| <p>ԲՄՍ6: Կենսաբազմազանության պահպանում եւ կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում</p> | <p>ԲՄՍ 6-ը ընդունում է, որ կենսաբազմազանության պաշտպանությունն ու պահպանումը և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարումը հիմնարար նշանակություն ունեն կայուն զարգացման համար, ինչպես նաև սահմանում է կենսամիջավայրերի, ներառյալ անտառների, կենսաբազմազանության պահպանման կարևորությունը:</p> | <p>Կենսաբազմազանության և կենդանի բնական ռեսուրսների վրա ազդեցությունները մանրակրկիտ կզնահատվեն և կմշակվեն ազդեցությունը նվազագույնի հասցնելու միջոցներ:</p> <p>ԲՄՍ6-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման այն գործողությունների համար, որոնք կիրականացվեն բնակելի և գյուղատնտեսական տարածքներից դուրս, բնական միջավայրում կամ շրջակայքում, ինչպիսիք են անտառները, պահպանվող տարածքները և բարձրադիր վայրերը:</p> |
| <p>ԲՄՍ8: Մշակութային ժառանգություն</p> | <p>ԲՄՍ8-ը սահմանում է մշակութային ժառանգության ապահովման շարունակականությունը անցյալի, ներկայի և ապագայի միջև՝ նյութական և ոչ նյութական ձևերով: ԲՄՍ8-ը սահմանում է միջոցառումներ, որոնք նախատեսված են մշակութային ժառանգության պաշտպանության համար ծրագրի ողջ ընթացքում:</p> | <p>Մշակութային ժառանգության վրա ազդեցությունները պետք է գնահատվեն և պաշտպանվեն ծրագրի իրականացման ողջ ցիկլի ընթացքում:</p> <p>ԲՄՍ8-ը կիրառելի է ենթակառուցվածքների վերականգնման այն գործողությունների համար,</p> |

| | | |
|---|--|---|
| | | <p>որոնք կիրականացվեն որպես մշակութային ժառանգություն պահպանվող տարածքներում և/կամ մշակութային հուշարձանների մոտ:</p> |
| <p>ԲՍՍ10: Շահակիրների ներգրավում և տեղեկատվության հանրայնացում</p> | <p>ԲՍՍ10-ը ընդունում է Վարկառուի և ծրագրի շահագրգիռ կողմերի միջև բաց և թափանցիկ ներգրավվածության կարևորությունը՝ որպես միջազգային պրակտիկայի կարևոր տարր: Արդյունավետ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը կարող է բարելավել նախագծերի ԲՍ կայունությունը, բարձրացնել նախագծերի ընդունումը և նշանակալի ներդրում ունենալ ծրագրի հաջող նախագծման և իրականացման գործում:</p> | <p>Ծրագրի շահակիրները պետք է նույնականացվեն Ծրագրի իրականացման հենց սկզբից: Ծրագրի համար պատրաստվել է առանձին ՇՆՊ, որը մանրամասնում է, թե ինչպես պետք է շահակիրներին նույնականացնել, խորհրդատվություն տրամադրել, քննարկումներին ներգրավել՝ Ծրագրի բնապահպանական և սոցիալական կայունության ապահովման և հաջող իրականացման գործում նշանակալի ներդրում ունենալու նպատակով:</p> <p>ԲՍՍ10-ը կիրառելի է կլաստերի հետ կապված բոլոր գործողությունների համար:</p> |

Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան. Պատրաստվել է Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանը (ԲՍՀՊ): ԲՍՀՊ-ն ընդգծում է էական միջոցառումներն ու գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի կողմից ԲՍՍ-ներին սահմանված ժամկետում բավարարելու համար: ԲՍՀՊ-ն կլինի TRIP վարկային համաձայնագրի մի մասը, որն անհրաժեշտության դեպքում կներառի ԲՍՀՊ-ի իրականացմանն աջակցելու պարտավորությունները:

Փոխկապակցված հաստատություններ. ԲՍՍ1-ը վերաբերում է բոլոր այն փոխկապակցված հաստատություններին, որոնք ի հայտ կգան Ծրագրի ընթացքում: Այդ հաստատությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
կհամապատասխանեն ԲՄՍ-ների պահանջներին այնքանով, որքանով Վարկառուն վերահսկողություն կամ ազդեցություն ունի նման հաստատությունների վրա: Այս համատեքստում «Փոխկապակցված հաստատություններ» տերմինը նշանակում է գործունեություն կամ հաստատություն, որոնք չեն ֆինանսավորվում որպես ծրագրի մաս և որոնք. (I) ուղղակիորեն և էականորեն կապված են ծրագրի հետ. (II) իրականացվել կամ նախատեսվում է իրականացնել նախագծի հետ միաժամանակ. և (III) անհրաժեշտ է ծրագրի կենսունակ լինելու համար և չէր կառուցվի, ընդլայնվի կամ իրականացվի, եթե նախագիծը գոյություն չունենար⁸:

ՕՔ 7.50 միջազգային ջրային ուղիների վերաբերյալ

ԲՄՇ-ն չի փոխարինում Միջազգային Ջրային ուղիների ՕՔ 7.50-ին, որը կազմվել է Ծրագրի անդրսահմանային Աղստև գետի հետ կապված գործունեության համար: ԲՄ գնահատումը հաշվի կառնի ՕՔ 7.50-ի պահանջները Աղստև գետի համար Դիլիջանի կլաստերի գործունեության ընթացքում՝ ԲՄՇ-ին համապատասխան: Այս գործողությունները կսահմանափակվեն հետևյալ շրջանակներով՝ համապատասխան գործիքների պատրաստմամբ և կիրառմամբ, ինչպիսիք են ՇՄՍԱԳ-ները կամ ԲՄԿՊ-ները՝ ԲՄ դիտագնման տեղեկատվության հիման վրա:

• Դիլիջան քաղաքի հիմնական գետի՝ Աղստև գետի աղտոտվածության նվազեցում և հեղեղումների ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացում, ինչպիսիք են. (ii) գետափերի վերականգնման համար բնության վրա հիմնված լուծումների կիրառում, ներառյալ ազգային բուսականության վերատնկումը. (iii) ջրահեռացման համակարգերի բարելավում. (iv) հետիոտնային կամուրջների կառուցում՝ դեպի հարակից Դիլիջանի քաղաքային զբոսայգի մուտքը բարելավելու համար:

5.4. Տարբերությունների վերլուծություն ԲՄԿՇ-ի եւ ազգային իրավական շրջանակի միջեւ

Հայաստանի օրենսդրությունը և կիրառման պրակտիկան ժամանակի ընթացքում մշակվել և համապատասխանեցվել են բնապահպանական և սոցիալական ԲՄ կայունության վերաբերյալ միջազգային լավ փորձին: Այնուամենայնիվ, օրենսդրությունը, քաղաքականությունը և ինստիտուցիոնալ համակարգերը դեռևս պետք է ամրապնդվեն մի շարք կարևոր ոլորտներում: Աղյուսակ 4-ում ներկայացված են Հայաստանի համապատասխան օրենքների և կանոնակարգերի և Համաշխարհային բանկի ԲՄՍ-ների պահանջների միջև հայտնաբերված բացերը/տարբերությունները, ինչպես նաև անհրաժեշտ լրացուցիչ միջոցներ՝ ԲՄԿՇ-ի շրջանակներում նման բացերը վերացնելու համար ⁹ :

⁸ Հաստատված է օրենքի կամ գործողության ունենալու փոփոխված համարվելու համար, բոլոր 3 չափորոշիչները սխալ է ասվել ինչու

⁹ ՀՀ 2024. Հայաստանի ազգային օրենսդրության և ՀԲԲԿ-ի միջև տարբերության ունենալու վերաբերյալ

Աղյուսակ 4. Համաշխարհային բանկի ԲՄՇ-ների պահանջներին համապատասխան Հայաստանի համապատասխան օրենքների եւ կանոնակարգերի գնահատում

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|---|--|
| ԲՄՄ 1. Բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցությունների գնահատում ու կառավարում | | |
| Ռիսկերի և ազդեցությունների բնապահպանական սոցիալական գնահատում և կառավարում, ներառյալ մեղմացման հիերարխիան | ՇՄԱԳ օրենքը (թարմացվել է 2023 թվականին) ընդհանուր առմամբ համահունչ է ԲՄՄ1-ին: Այնուամենայնիվ, Շրջակա միջավայրի կառավարման օրենքի և մոնիտորինգի ծրագրերի մշակումը լիազորված է միայն այն գործողությունների համար, որոնց համար օրենքը պահանջում է պետական ՇՄԱԳ փորձաքննություն: Այլ գործունեության համար օրենքով սահմանված չէ բնապահպանական կառավարման գործիք: ՇՄԱԳ օրենքը չի ներառում սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բացահայտումը և կառավարումը: | Սոցիալական ռիսկերի և ազդեցությունների նույնականացումը և կառավարումը պետք է իրականացվի Բաղադրիչ 2-ի ներքո գտնվող յուրաքանչյուր ենթաբաղադրիչի և ենթաձևերի համար՝ մեղմացման հիերարխիայի համաձայն՝ ԲՄՄ պահանջներին համապատասխան: |
| Ազդեցության ենթակա տարածքում փոխկապված գործունեություն | ՇՄԱԳ օրենքը չի կարգավորում փոխկապված գործունեությունները | Փոխկապված գործունեության դեպքում ԲՄՄ1-ի պահանջները կկիրառվեն |
| Ինստիտուցիոնալ պատասխանատվություն և կիրարկման կարողություն | ՇՄԱԳ օրենքը հստակ չէ նախագծերի հարմարվողական կառավարման համար մոնիտորինգի տվյալների օգտագործման հետ կապված: | Շինարարական աշխատանքների ամենամսյա բնապահպանական և սոցիալական մոնիտորինգը կկիրառվի դրանց հարմարվողական/ճկուն կառավարման համար: |
| Խոցելի խմբերի պաշտպանության միջոցներ | Տեղական օրենսդրությունը չի պահանջում խոցելի խմբերի վրա ազդեցությունների բացահայտում կամ կառավարում | ԲՄՄ1-ի և ԲՄՄ10-ի պահանջները կկիրառվեն |
| ԲՄՄ2: Աշխատանք եւ աշխատանքային պայմաններ | | |
| Աշխատանքի պայմանները | Հայաստանն ունի համապարփակ Աշխատանքային օրենսգիրք (2004 թ.): Հայաստանը վավերացրել է նաև | Ազգային օրենսդրությունը կկիրառվի |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|--|--|------------------------------------|
| | <p>Աշխատանքի միջազգային կազմակերպության հիմնական աշխատանքային կոնվենցիաները: Այնուամենայնիվ, Աշխատանքային օրենսգրքի կիրարկումը ուշանում է, հիմնականում պայմանավորված Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ օրենքները կիրառելու կարողությամբ, ինչպես նաև վերջին տասնամյակում օրենսդրական փոփոխությունների քանակով և տեմպերով: Ազգային օրենսդրությունը համահունչ է միջազգային լավ փորձին և ԲՄՍ2 պահանջներին:</p> | |
| <p>Աշխատանքի անվտանգություն և առողջություն (ԱԱԱ)</p> | <p>Թեև Աշխատանքային օրենսգիրքը ներառում է ԱԱԱ-ի վերաբերյալ հիմնական դրույթներ, կան որոշակի բացեր ԲՄՍ2 պահանջների հետ, ինչպես նաև ոլորտներ, որոնք պահանջում են հետագա ուժեղացում: Աշխատանքային օրենսգիրքը գործատուներից պահանջում է ապահովել անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր, անցկացնել ԱԱԱ ռիսկերի գնահատումներ և պլաններ, տրամադրել անվտանգության դասընթացներ աշխատողներին և տրամադրել անձնական պաշտպանիչ սարքավորումներ, սանիտարական և հանգստի հարմարանքներ: ԱԱԱ ստանդարտները կարգավորվում են նաև հատուկ որոշումներով և ակտերով: Քրեական օրենսգիրքը տույժեր է նախատեսում ԱԱԱ օրենքների և կանոնակարգերի խախտման համար: Աշխատանքային օրենսգիրքը գործատուներից պահանջում է սահմանել ԱԱԱ պահանջներին համապատասխանությունը վերահսկելու ընթացակարգեր, հաստատել ԱԱԱ ներքին ակտերն ու կանոնակարգերը և նշանակել</p> | <p>ԲՄՍ2-ի պահանջները կկիրառվեն</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|--|-----------------------------------|
| | <p>անվտանգության հատուկ փորձագետ: Այն նաև պահանջում է գործատուներից տեղեկացնել և խորհրդակցել աշխատակիցների հետ ԱԱԱ խնդիրների վերաբերյալ և նախատեսում է առողջության և անվտանգության հանձնաժողովների ստեղծում: Թեև օրենսգիրքը պահանջում է գործատուներից տեղեկացնել աշխատողներին ցանկացած վտանգավոր աշխատանքային իրավիճակի մասին և դադարեցնել աշխատանքները նման դեպքերում, այն բացահայտորեն չի արգելում վրեժխնդիր լինել այն աշխատողի դեմ, ով հայտնում է անապահով իրավիճակի մասին. ոչ էլ բացահայտորեն նախատեսում է աշխատողների համար անապահով աշխատանքային իրավիճակներից հեռանալը: Աշխատանքային օրենսգիրքը չի ներառում աշխատավայրերում առաջին օգնության պայուսակներ տրամադրելու հստակ պահանջներ, ինչպես նաև բացահայտված չէ վերապատրաստման գրառումների պահպանման պատասխանատվությունը: Այն չի պահանջում տղամարդկանց և կանանց համար առանձին սանիտարահիգիենիկ պահանջներ:</p> | |
| <p>Երեխաների աշխատանք և հարկադիր աշխատանք</p> | <p>Հայաստանը վավերացրել է երեխաների աշխատանքին վերաբերող բոլոր հիմնական միջազգային կոնվենցիաները և լրիվ դրույքով աշխատանքի համար նվազագույն աշխատանքային տարիքը 16 տարին է, ինչը համահունչ է ԲՄՍ2-ին: Ազգային օրենսդրությունն արգելում է երեխաների աշխատանքի ոչ նպաստավոր ձևերը: Այնուամենայնիվ, 14-ից 16 տարեկան երեխաները կարող են աշխատել ծնողի կամ օրինական խնամակալի գրավոր համաձայնությամբ: Օրենքը թույլ է տալիս 14</p> | <p>ԲՄՍ2-ի պահանջները կգործեն:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|------------------------------|---|-------------------------------------|
| | <p>տարեկանից փոքր երեխաներին աշխատել ժամանցի ոլորտում՝ սահմանված սահմանափակումներով և ծնողի կամ խնամակալի համաձայնությամբ: Աշխատանքային շաբաթվա առավելագույն տևողությունը 24 ժամ է 14-ից 16 տարեկան երեխաների համար, և 36 ժամ՝ 16-ից 18 տարեկան երեխաների համար: 18 տարեկանից փոքր անձինք չեն կարող արտաժամյա աշխատել վնասակար, ծանր կամ վտանգավոր պայմաններում՝ գիշերը կամ տոն օրերին: Այնուամենայնիվ, Աշխատանքային օրենսգիրքը չի պահանջում գործատուներից իրականացնել ռիսկի համապատասխան գնահատում 14-ից 18 տարեկան երեխային աշխատանքի ընդունելիս՝ ապահովելու համար, որ անչափահասը չի ենթարկվում մասնագիտական ռիսկի, ինչպես նաև, որ գործատուները վերահսկեն, թե ինչպես են երիտասարդ աշխատողների համար ապահովվում պաշտպանական միջոցները: Վերջինս կարելի է դիտարկել որպես ԲՄՍ2-ի բացթողում: Հատուկ ծրագրերում այս բացը կամրջելու համար, որտեղ կարող են աշխատել մինչև 18 տարեկան աշխատողներ, պետք է իրականացվեն ռիսկերի գնահատումներ, և երիտասարդ աշխատողների համար պետք է իրականացվեն մեղմացման միջոցառումներ և մոնիտորինգ:</p> | |
| <p>Միավորման ազատություն</p> | <p>Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ միավորվելու ազատության, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի ստիպել միանալ որևէ մասնավոր ասոցիացիայի:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը կկիրառվի:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|--|---|
| | <p>Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p> <p>Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով»:</p> | |
| <p>Աշխատատեղում գենդերային խտրականություն</p> | <p>Հայաստանում գործում են գենդերային խտրականության և սեռական ոտնձգությունների և բռնությունների մասին օրենքներ, իսկ Աշխատանքային օրենսգրքում նոր ներդրված իրավական փոփոխություններն արգելում են բռնությունն ու սեռական ոտնձգությունը աշխատավայրում:</p> <p>Այնուամենայնիվ, աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունները կարող են տեղի ունենալ բոլոր մարզերում, մինչդեռ իրավապահ մարմինների արձագանքն ավելի սահմանափակ է մայրաքաղաքից դուրս:</p> | <p>ԲՄՄ2-ի կիրառումը պահանջում է կապալառուների կողմից աշխատողների ԲՄ-ի ստեղծման համար, որը հատկապես զգայուն է Սեռական խտրականությունների և բռնության նկատմամբ:</p> |
| <p>Բողոքների մեխանիզմ</p> | <p>Աշխատակիցները, ովքեր կարծում են, որ իրենց աշխատանքային իրավունքները ոտնահարված են, կարող են փոխհատուցում փնտրել դատական տարբեր մեխանիզմներով, սակայն աշխատանքային օրենսդրությունը գործատուի մակարդակով բողոքարկման մեխանիզմներ չի նախատեսում, որպեսզի աշխատողները ուղղակիորեն բարձրաձայնեն աշխատավայրի մասին ցանկացած մտահոգության և լուծեն անհատական աշխատանքային վեճերը: Սա</p> | <p>ԲՄՄ2-ի պահանջները կկիրառվեն, և Կապալառուները պետք է ստեղծեն աշխատողների ԲՄ:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|---|------------------------------------|
| | <p>ներկայացնում է բաց ԲՄՄ2-ի աշխատողների բողոքարկման մեխանիզմի պահանջի հետ: Աշխատանքային վեճերը քննվում են դատարանով՝ համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (2018 թ.): Աշխատանքային օրենսգրքը նախատեսում է կոլեկտիվ վեճերի լուծման ընթացակարգ՝ որպես կոլեկտիվ բանակցությունների գործընթացի մաս:</p> | |
| <p>ԲՄՄ3. Ռեսուրսների արդյունավետություն եւ աղտոտման կանխարգելում ու կառավարում</p> | | |
| <p>Ռեսուրսների արդյունավետ օգտագործում</p> | <p>Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և աղտոտման կառավարումը նախատեսող հիմնական օրենքներն են՝ Ջրային օրենսգրքը (2002 թ.), «Ջրային ազգային քաղաքականության հիմունքների մասին» ՀՀ օրենքը (2005 թ.), «Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին» ՀՀ օրենքը (2004 թ.), ինչպես նաև Ընդերքի օրենսգրք (2011 թ.), «Թափոնների մասին» օրենքը (2004 թ.), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը (1994 թ.):</p> | <p>ՀՀ օրենսդրությունը կկիրառվի</p> |
| <p>Թափոնների հեռացում</p> | <p>Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և աղտոտման կառավարումը ապահովող հիմնական օրենքներն են՝ Ջրային օրենսգրքը (2002թ.), Ջրային ազգային քաղաքականության հիմունքների մասին օրենքը (2005թ.), էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին օրենքը (2004թ.), ինչպես նաև Ընդերքի օրենսգրքը (2011 թ.), «Թափոնների մասին» օրենքը (2004 թ.), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը (1994 թ.): Աղտոտման կանխարգելման ազգային կարգավորող դաշտը առաջնահերթություն է տալիս հանրային առողջության պաշտպանությանը և հիմնված է</p> | <p>ԲՄՄ3-ի պահանջները կկիրառվեն</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|---|-------------------------------------|
| | <p>աղտոտիչների թույլատրելի կոնցենտրացիաների սահմանների վրա, որոնց կարող են ենթարկվել մարդիկ: Երկրում բացակայում են թափոնների հեռացման և կեղտաջրերի մաքրման ենթակառուցվածքը, ինչը աղտոտվածության կառավարման համար լուրջ մարտահրավեր է:</p> <p>Թափոնների մասին օրենքը (2004թ.) և Թափոնների հեռացման և սանիտարական մաքրման մասին օրենքը (2011թ.) բացառում են թափոնների ոչ պաշտոնական թափումը և ազատ այրումը, արգելում են վտանգավոր թափոնների հեռացումը քաղաքային աղբավայրերում, սահմանում են թափոնների սեփականության իրավունքը և դրանց հեռացման համար վճարման համակարգը: Թափոնների տարանջատումն առաջարկվում է հնարավոր վերաօգտագործման համար և խրախուսվում համայնքի մակարդակով, իսկ թափոնների կրճատման և վերամշակման համար առաջարկվում են տնտեսական խթաններ: Թափոնների մասին օրենքը խրախուսում է թափոնների կրճատման և վերամշակման համար, սակայն չի սահմանում թափոնների կառավարման հիերարխիա:</p> | |
| ԲՄՄ4: Համայնքային առողջություն և անվտանգություն | | |
| <p>Ենթակառուցվածքների և սարքավորումների նխագծում և անվտանգություն</p> | <p>Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը ապահովվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» (1998 թ.), «Հրդեհային անվտանգության մասին» (2001 թ.), «Մեյսմիկ պաշտպանության մասին» (2002 թ.) և «Քաղաքացիական» ՀՀ օրենքներով: Չնայած</p> | <p>ԲՄՄ4-ի պահանջները կկիրառվեն:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|--|---|-------------------------------------|
| | <p>ջրբաժանների համալիր կառավարման ընդունված սկզբունքին, համայնքների, ինչպես նաև համայնքների և արդյունաբերական ջրօգտագործողների միջև ջրի օգտագործման հետ կապված հակասություններ են առաջանում:</p> | |
| <p>Անվտանգության աշխատակիցներ</p> | <p>«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է պահառուների, անվտանգության անձնակազմի գործունեության իրավական հիմքերը, լիցենզավորման պահանջները, նախատեսում է դրույթներ գործունեության իրականացման և վերապահումներ գործունեության իրականացման, ուժի և զենքի կիրառման համար և այլն:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը կկիրառվի:</p> |
| <p>Առողջական խնդիրներ առաջացնող ազդեցություններ համայնքի համար</p> | <p>«Երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքը (2005 թ.) հիմք է տալիս երթևեկության կազմակերպմանը, ներառյալ ճանապարհային նշանների տեղադրումը, ճանապարհային գծանշումը և ճանապարհային միջանցքներում աշխատանքային տեղամասերի շուրջ երթևեկության կառավարումը: Այս կանոնները սովորաբար պահպանվում են մայրուղիներում և հիմնական ճանապարհներում, բայց ավելի քիչ՝ երկրորդական ճանապարհներում:</p> <p>Վտանգավոր նյութերի և վտանգավոր թափոնների հետ վարվելու կանոնակարգերի կիրարկումը երբեմն խոչընդոտվում է կանոնների և համապատասխան թերացումների հետևանքով մարդու առողջությանը պատճառվող վնասների մասին հանրության ցածր տեղեկացվածության պատշառով: Օրինակ է ասբեստ պարունակող թափոնները վերօգտագործելու</p> | <p>ԲՄՄ4 պահանջները կկիրառվեն:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|---|--|
| | համայնքների պատրաստակամությունը: | |
| ԲՄՄ5: Հողի օտարում, հողօգտագործման սահմանափակումներ եւ հարկադիր տարաբնակեցում | | |
| Հողի օտարումից և դրա հետ կապված անբարենպաստ ազդեցություններից խուսափելու կամ նվազագույնի հասցնելու պահանջները | «Հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի և ԲՄՄ5-ի միջև կան որոշ առանցքային բացեր: Միայն կադաստրային տվյալները նույնպես մարտահրավերներ են ներկայացնում, թեև կադաստրի արդիականացման և միավորման բարեփոխումներն ու ջանքերը շարունակվում են: | ԲՄՄ5-ի պահանջները կկիրառվեն «Հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը լրացնելու համար: |
| Փոխհատուցումների և ապրուստի միջոցների վերականգման իրավասության չափանիշները | «Հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը չի ներառում տնտեսական և սոցիալական ազդեցությունների փոխհատուցումը և չի ճանաչում ոչ ֆորմալ հողօգտագործողների փոխհատուցման իրավունքը: | ԲՄՄ5-ի պահանջները կկիրառվեն: |
| Կենսամիջոցների վերականգնում | Հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենքը չի նախատեսում կենսամիջոցների վերականգնում: | ԲՄՄ5 պահանջները կկիրառվեն: |
| Խոցելի խմբերի պաշտպանության միջոցներ | Հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենքը չի նախատեսում ապրուստի միջոցների վերականգնում: | ԲՄՄ5 պահանջները կկիրառվեն: |
| Հարկադիր տարհանում | ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը և ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը վերաբերում են սեփականությանը և մասնավոր սեփականության օտարմանը, բայց հստակ չի սահմանում «հանրային և պետական կարիքները» կամ «գերակա հանրային շահերը»: Անգամ 2006 թվականի «Հանրային գերակա | ԲՄՄ5-ի պահանջները կկիրառվեն: |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|--|---|
| | <p>շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը լիովին չի բացատրում, թե որն է այդ երկու առանցքային հասկացությունների էությունը: Օրենքը, սակայն, սահմանում է այն սկզբունքներն ու խնդիրները, որոնց հիման վրա որոշվում է գերակա հանրային շահը և գույքը օտարվում է պետությանը: Օրենքը պարունակում է դրույթներ գույքի հարկադիր օտարման վերաբերյալ:</p> | |
| <p>Բողոքների մեխանիզմ</p> | <p>Օրենքը չի պահանջում հանրային քննարկումներ կամ բողոքարկման մեխանիզմ հողի օտարման գործընթացում:</p> | <p>ԲՄՄ5-ի պահանջները կկիրառվեն:</p> |
| <p>ԲՄՄ6: Կենսաբազմազանության պահպանում և կենդանի ռեսուրսների կայուն կառավարում</p> | | |
| <p>Կենսաբազմազանության պահպանում</p> | <p>Կենսաբազմազանության և կենդանի բնական ռեսուրսների կառավարումը կարգավորվում է մի քանի օրենքներով, որոնցից ամենակարևորներն են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2004թ.), «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.), «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000թ.) և «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենք (2007թ.), ՇՄԱԳ մասին օրենքը (2023թ.), «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005թ.) և «Անտառային օրենսգիրքը» (2005թ.) նույնպես կարգավորումներ են ներկայացնում կենսաբազմազանության պաշտպանության և կառավարման համար:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը կկիրառվի:</p> |
| <p>Կենսամիջավայր</p> | <p>Օրենքները կենտրոնացած են պոպուլյացիաների և վայրի բնության նմուշների պաշտպանության վրա:</p> | <p>ԲՄՄ6-ի պահանջները կկիրառվեն ՀՀ օրենսդրության բացերը լրացնելու համար:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|--|--|-------------------------------------|
| | <p>Մինչդեռ դրանց կենսամիջավայրի պահպանությանը համարժեք նշանակություն չի տրվում: Չկա կենսամիջավայրի դասակարգում որպես փոխակերպված, բնական կամ կրիտիկական, և չկա կենսաֆիզիկական միասնական դասակարգում:</p> | |
| <p>Կենդանի բնական ռեսուրսներ</p> | <p>«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 5-րդ հոդվածն արգելում է բնական ռեսուրսների գերշահագործումը, սակայն կենդանի բնական ռեսուրսների՝ անտառների, ձկնորսության, արոտավայրերի և դրանցում բնակվող առանձին տեսակների սպառում և դեգրադացիա դեռևս տեղի է ունենում: Տեսչական ստուգման համար անհրաժեշտ բավարար մարդկային ռեսուրսների և տեխնիկական միջոցների բացակայությունն ակնհայտ է: Անբավարարության վրա հիմնված ռեսուրսների կայուն օգտագործման և/կամ դրանց ստեղծման մեթոդաբանական ուղեցույցների բացակայությունը կիրարկման հիմնական մարտահրավերն է:</p> | <p>ԲՄՄ6-ի պահանջները կկիրառվեն:</p> |
| <p>ԲՄՄ7: Մշակութային ժառանգություն</p> | | |
| <p>Մշակութային ժառանգության վրա նյութական և ոչ նյութական բացասական ազդեցությունների կառավարում</p> | <p>«Պատմության, մշակույթի և անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998 թ.) և «Մշակութային արժեքների ներմուծման և արտահանման մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) կարգավորում են ՀՀ նյութական մշակութային ռեսուրսների պահպանությունն ու օգտագործումը: Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին օրենքը (2009) պաշտպանում է ոչ նյութական արժեքները:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը կկիրառվի:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|---|---|---|
| | <p>Տարածական և քաղաքաշինական պլանավորման ընթացակարգերը ներառում են դրույթներ պատմական հուշարձանների և քաղաքային ժառանգության պահպանման համար: Այնուամենայնիվ, համակարգված կառավարումն ու կիրառումը դժվար է, քանի որ ակտիվների մի մասը պատկանում է Հայ Առաքելական եկեղեցուն և մասնավոր մարմիններին:</p> | |
| ԲՄՍ10: Շահակիրների ներգրավում եւ տեղեկատվության հանրայնացում | | |
| <p>Շահակիրների ներգրավում, ներառյալ խոցելի խմբերի համար նախատեսված միջոցառումները</p> | <p>Սահմանադրությունը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (1998թ.), ՇՄԱԳ օրենքը (2023թ.) երաշխավորում են հանրային ծանուցումը, տեղեկատվության հասանելիությունը և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը զարգացման ծրագրերում: Թեև օրենսդրական դաշտը նախատեսում է պատշաճ հանրային ծանուցումների և խորհրդատվական հանդիպումների անհրաժեշտությունը, այն չի ապահովում բովանդակալից խորհրդատվական հանդիպումներ նախագծերի սկզբնական փուլում և չի ապահովում խոցելի խմբերի մասնակցությունը:</p> | <p>ԲՄՍ10-ի պահանջները կկիրառվեն:</p> |
| <p>Տեղեկատվության հանրայնացում</p> | <p>ՇՄԱԳ օրենքը (2023) երաշխավորով է հանրային ծանուցում և տեղեկատվության հասանելիություն:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը կկիրառվի ՇՄԱԳ օրենքի պահանջներին համապատասխան կազմված բնապահպանական և սոցիալական կառավարման փաստաթղթերի հրապարակման նկատմամբ: ԲՄՍ10-ի պահանջները կկիրառվեն բնապահպանական և սոցիալական կառավարման փաստաթղթերի նկատմամբ, որոնք չեն պահանջվում ազգային օրենսդրությամբ և պատրաստված են բավարարելու ԲՄՍ1-ի պահանջները:</p> |

| ԲՄՇ-ի պահանջներ | Ուսումնասիրություններ | Բացերի լրացման միջոցներ |
|--------------------|---|-------------------------------|
| Բողոքների մեխանիզմ | Հայաստանը վերջերս մշակել է օրենսդրություն և էլեկտրոնային գործիքներ՝ քաղաքացիների արձագանքներն ու բողոքները ստանալու և լուծելու համար: Այնուամենայնիվ, ծրագրերի շրջանակներում բողոքարկման կոնկրետ մեխանիզմի կիրառման պահանջ չկա: | ԲՄՄ10-ի պահանջները կկիրառվեն: |

6. ԾՐԱԳՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ՊՈՏԵՆՑԻԱԼ ԲՄ ՌԻՍԿԻ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ենթածրագրերի բնապահպանական և սոցիալական հարցերը պետք է հաշվի առնվեն ենթածրագրի ցիկլի բոլոր փուլերում, որը ներառում է ենթածրագրի գաղափարի նախնական գնահատումը, ֆիզիկական աշխատանքների իրականացումը և ենթակառուցվածքի շարունակական շահագործման փուլը:

6.1. Համառոտ բնապահպանական և սոցիալ-տնտեսական ելակետ

Ակնկալվում է, որ Ծրագիրը կհանգեցնի զբոսաշրջության յոթ կլաստերների ձևավորմանը՝ բարելավված հասանելիության և ենթակառուցվածքների որակի, զբոսաշրջության բարելավված առաջարկների թե՛ խորության և թե՛ լայնության, ինչպես նաև զբոսաշրջության վրա հիմնված տեղական տնտեսական զարգացման կարողությունների ավելացմանը, ինչպես նաև կլաստերների կայուն գործառնություններն ու կառավարումը: Ընդհանուր տնտեսական օգուտը կլինի կլաստերների զբոսաշրջային ներուժի շուրջ մոբիլիզացված ներդրումները, որոնք կբարձրացնեն ընտրված բնակավայրերի և հարևան համայնքների տեսանելիությունը և դրական իմիջը, կտարբերակվեն մրցակից վայրերից (ազգային և միջազգային բրենդինգի առումով) և դրանով իսկ կնպաստեն ներդրումների ավելացմանը և բիզնեսի զարգացմանը:

Յուրաքանչյուր թիրախային մարզ, որում ծրագիրը նախատեսում է միջամտություն, եզակի ներդրում ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական լանդշաֆտի և էկոլոգիական հարստության մեջ՝ համատեղելով տնտեսական գործունեությունը, մշակութային ժառանգությունը և կենսաբազմազանությունը:

Ծրագիրը նախատեսված է վերականգնել և արդիականացնել ենթակառուցվածքները և ծառայությունները յոթ առաջնահերթ կլաստերների համար (Արենի, Գյումրի, Գորիս, Դիլիջան, Դվին, Ջերմուկ և Եղեգիս) Ենթաբաղադրիչ 2.1-ի շրջանակներում: Այս կլաստերները գտնվում են Գյումրիի, Գորիսի, Դիլիջանի և Ջերմուկի քաղաքային վայրերում, ինչպես նաև գյուղական վայրերում, ներառյալ Արենի, Դվին և Եղեգիս, որոնք ընդգրկում են Հայաստանի Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի, Սյունիքի և Արարատի մարզերը (մարզերը): Հայաստանում թիրախային կլաստերային համայնքների կենսաֆիզիկական ելակետը ընդգծում է տարբեր կլիմայական տարածաշրջաններում առկա բազմազան էկոհամակարգերը:

Արենի համայնքի լանդշաֆտը հայտնի է իր յուրահատուկ երկրաբանական կազմավորումներով և հանդիսանում է «Նորավանք» պահպանվող գոտու մի մասը: Արենին

ուրույն մշակութային նշանակություն ունի իր հին գինեգործական ավանդույթներով, պատմական հուշարձաններով և Արենի-1 քարանձավով, որը բնակավայրին կից կարևոր հնագիտական վայր է: Վայոց ձորի Արենին հայտնի է որպես թիթեռների առաջնային տարածք, որտեղ կան հազվագյուտ տեսակներ, ինչպես նաև այստեղ առկա է հարուստ կենսաբազմազանություն, ներառյալ բեզոարյան այծերը և հայկական մուֆլոնները:

Դիլիջանը գտնվում է Դիլիջան ազգային պարկի (ԱՊ) մոտ, որը զբաղեցնում է մոտ 240 քառակուսի կիլոմետր տարածք: ԱՊ-ն հայտնի է իր անտառապատ լանդշաֆտով, հարուստ կենսաբազմազանությամբ, հանքային ջրերի աղբյուրներով և բնական և մշակութային հուշարձաններով: Աղստև գետը հոսում է Դիլիջանով, անդրսահմանային գետ է, որն ի վերջո միախառնվում է Քուռ գետին, որը շարունակվում է հոսանքով դեպի Կասպից ծով: Ծրագրի միջամտությունները Աղստև գետի վրա կունենան սահմանափակ շրջանակ կենտրոնանալով գետի աղտոտվածության նվազեցման և հեղեղումների ռիսկերի նվազեցման վրա:

Արարատյան դաշտում գտնվող Դվինն ունի չոր կլիմա՝ յուրահատուկ անապատային բուսականությամբ և կենդանական աշխարհ: Դվինն ունի մշակութային արգելոց-թանգարանի կարգավիճակ, որը ճանաչվել է իր հարուստ պատմամշակութային նշանակությամբ որպես Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկը և առանցքային հնագիտական վայր:

Գյումրին հայտնի է իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, բազմաթիվ վարչական, մասնավոր և հասարակական շենքերով, որոնք պահպանվել են «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում, որն ունի 19-րդ դարի կառույցներ: Թաղամասը օրենքով սահմանված կարգով համարվում է պահպանվող տարածք՝ ընդգծելով դրա կարևորությունը Հայաստանի ճարտարապետական և մշակութային ժառանգության պահպանման գործում: Գյումրին Հայաստանի ամենացուրտ քաղաքն է՝ տափաստանային էկոհամակարգով և հազվագյուտ տեսակներով:

Արարատյան դաշտում գտնվող Դվինն ունի չոր կլիմա՝ յուրահատուկ անապատային բուսականությամբ և կենդանական աշխարհ: Դվինն ունի մշակութային արգելոց-թանգարանի կարգավիճակ, որը ճանաչվել է իր հարուստ պատմամշակութային նշանակությամբ որպես Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկը և առանցքային հնագիտական վայր:

Գյումրին հայտնի է իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, բազմաթիվ վարչական, մասնավոր և հասարակական շենքերով, որոնք պահպանվել են «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում, որն ունի 19-րդ դարի կառույցներ: Թաղամասը օրենքով սահմանված կարգով համարվում է պահպանվող տարածք՝ ընդգծելով դրա կարևորությունը Հայաստանի ճարտարապետական և մշակութային ժառանգության

պահպանման գործում: Գյումրին Հայաստանի ամենացուրտ քաղաքն է՝ տափաստանային էկոհամակարգով և հազվագյուտ տեսակներով:

Գործիսը հայտնի է իր գեղատեսիլ շրջակայքով, որի որոշ հատվածներ պաշտպանված են «Զանգեզուր կենսոլորտային» համալիրում՝ պահպանելու եզակի կենսաբազմազանությունն ու էկոհամակարգերը: Քաղաքային բնակավայրը մշակութային նշանակություն ունի իր պատմական «Հին քաղաքով»՝ օրենքով պահպանվող տարածքով, որն առանձնանում է ավանդական քարե ճարտարապետությամբ, ինչպես նաև մոտակայքում գտնվող հին քարանձավային տների տեսարժան վայրերով: Այնուամենայնիվ, բարեխառն կլիմայով Գործիսը անտառների ոչնչացման և էրոզիայի հետ կապված խնդիրների առաջ է կանգնած: Գործիս գետը հոսում է քաղաքով, բայց անդրսահմանային գետ չէ, և առաջարկվող նախագծով դրա համար որևէ գործունեություն չի նախատեսվում, քանի որ գետի հետ կապված գործողություններ արդեն իրականացվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ (ՀԲ) ՏՏԵԶ նախորդ ծրագրով:

Եղեգիս բնակավայրը նշանակված պատմամշակութային հուշարձան է և հայտնի է իր միջնադարյան եկեղեցիներով, կառույցներով և հնագույն գերեզմանոցով: Եղեգիսի լեռնային տեղանքում առկա են տարբեր կաթնասուններ, թռչուններ և միջատներ:

Ջերմուկը՝ զբոսաշրջության և հանքային ջրերի հիմնական հանգույցը, հարուստ է ալյան կենսաբազմազանությամբ, այդ թվում՝ կովկասյան ընձառյուծով: Ջերմուկը հայտնի է իր գեղատեսիլ բնապատկերով, որտեղ կան անտառներ և առատ հանքային աղբյուրներ: Քաղաքը մշակութային նշանակություն ունի որպես պատմական առողջարանային վայր, որը հայտնի է իր բնական բուժիչ ռեսուրսներով:

Ծրագիրը նաև կբարելավի և կվերականգնի հիմնական և առկա ենթակառուցվածքները քաղաքային և գյուղական տարածքներում առաջարկվող կլաստերներում: Գյումրիում, Դիլիջանում, Ջերմուկում և Գործիսում միջամտությունները տեղի կունենան քաղաքային վայրերում՝ հիմնականում կենտրոնական հատվածներում: Այս տարածքները, թեև քաղաքային են, սակայն խիտ բնակեցված չեն, ինչը թույլ է տալիս ենթակառուցվածքների և զբոսաշրջության հետ կապված բարելավումներ իրականացնել՝ առանց մեծ խափանումներ և անհանգստություն ստեղծելով բնակավայրերի բնականոն կյանքի համար: Գյումրիում և Գործիսում Ծրագիրը կներառի բարեկարգումներ քաղաքների կենտրոններում, որտեղ հանրային տարածքները, ճանապարհները և շինությունները լայնորեն օգտագործվում են մեծ թվով մարդկանց կողմից: Ջերմուկում միջամտությունները կենտրոնանալու են զբոսաշրջային վայրերի վրա, որոնք գտնվում են բնակելի տարածքներից հեռու՝ նվազագույնի հասցնելով բնակիչների վրա ազդեցությունը: Դիլիջանում միջամտությունները հիմնականում կազդեն հանրային տարածքների և ենթակառուցվածքների վրա՝ միայն փոքրածավալ և ժամանակավոր ազդեցություններով բնակելի տարածքների վրա: Ի հակադրություն, Արենիում, Դվինում և Եղեղիսում

միջամտությունները տեղի կունենան գյուղական վայրերում, որտեղ բնակչության խտությունը զգալիորեն ցածր է: Այս տարածքները բնութագրվում են ավելի շատ բաց տարածքներով և գյուղատնտեսական հողատարածքներով, Ծրագրի ազդեցության տարածքում տնային տնտեսությունների ավելի փոքր թվով: Բացի այդ, ակնկալվում է, որ փոքրածավալ ենթակառուցվածքային գործողություններ, ինչպիսիք են Արենիում և Գորիսում հետիոտն արահետների և Արենիում արշավային վայրերի ստեղծումը՝ բնության վրա հիմնված զբոսաշրջությունը խթանելու համար, ակնկալվում է իրականացնել այս բնակավայրերը շրջապատող պետական պաշտպանված լանդշաֆտներում: Գործողություններից ոչ մեկը չի իրականացվի հակամարտությունից տուժած/վիճելի տարածքներում:

Խոցելիության և բնակչության բնութագրերի առումով կլաստերները զգալիորեն տարբերվում են: Գյումրին ունի ժողովրդագրական բազմազանություն, ներառյալ մեծ թվով տնտեսապես անապահով բնակիչներ և անհատներ, որոնք դեռ վերականգնվում են 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի երկարաժամկետ ազդեցություններից: Գյումրու բնակչությունը բախվում է սոցիալ-տնտեսական մարտահրավերների, ինչպիսիք են գործազրկության և աղքատության բարձր մակարդակը, հատկապես ծայրամասային շրջաններում: Բնակիչներից շատերն ապավինում են փոքրածավալ առևտրին, արհեստներին և ծառայություններին՝ մեծացող ուշադրությամբ զբոսաշրջության և մշակութային ժառանգության վրա՝ որպես տնտեսական զարգացման հիմնական ուղիներ: Ջերմուկի, Գորիսի և Դիլիջանի բնակչությունը հիմնականում զբաղվում է զբոսաշրջությամբ, հյուրընկալությամբ և փոքր գյուղատնտեսությամբ: Այս համայնքները բախվում են այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են սեզոնային տնտեսական տատանումները և զբոսաշրջության ոլորտից դուրս զբաղվածության սահմանափակ հնարավորությունները: Արենիում, Դվինում, Եղեգիսում բնակչությունը հիմնականում բաղկացած է գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղական ընտանիքներից: Արենիի բնակիչներից շատերը մանր ֆերմերներ են կամ ներգրավված են զբոսաշրջության հետ կապված գործունեության մեջ, որոնք բախվում են եկամուտների սեզոնային տատանումների: Մինչդեռ Դվինի և Եղեգիսի բնակիչները բախվում են մարտահրավերների՝ կապված գյուղերի մեկուսացման, սահմանափակ ենթակառուցվածքների և սահմանափակ տնտեսական բազմազանության հետ, որոնք նպաստում են սոցիալ-տնտեսական խոցելիությանը, հատկապես երիտասարդների և անապահով խմբերի շրջանում»:

Յուրաքանչյուր կլաստերում ներդրումները նախատեսվում են ինտեգրելու ժառանգության պահպանությունը (որտեղ կիրառելի է), և ակնկալվում է, որ հիմնական ենթակառուցվածքների բարելավումը կբարձրացնի տեղի բնակչության և այցելուների կենսունակությունն ու ճկունությունը: Ճանապարհների վերականգնումը և տրանսպորտային այլ ենթակառուցվածքները կարող են խթանել տնտեսական ակտիվությունը չօգտագործված տարածքներում՝ խթանելով շուկայական փոխանակման

մեխանիզմները և անշարժ գույքի զարգացումը, ինչպես նաև բարձրացնելով աշխատատեղերի մատչելիությունը և աշխատանքի արտադրողականությունը, ինչպես նաև ներդրումները ժառանգության և մշակութային արժեքների պահպանման մեջ կնպաստեն ոչ նյութական օգուտների, բացահայտելով «տեղային զգացումը»/”sense of place”/ և տոնելով իսկությունը դրական տեղական ինքնության և հարակից սոցիալական կապիտալի միջոցով, ինչպես նաև կնպաստեն ավանդական արհեստագործության և արհեստագործական հմտությունների վերածննդին՝ ուղղված համայնքային ռեսուրսների մոբիլիզացմանը զարգացման այլ մարտահրավերների համատեքստում:

6.2. Ծրագրի գործունեության համառոտ ակնարկ

Ծրագրի նպատակն է խթանել զբոսաշրջության զարգացումը Հայաստանում՝ կենտրոնանալով կայուն տնտեսական աճի, մշակութային ժառանգության պահպանման և շրջակա միջավայրի պաշտպանության վրա: Հիմնական գործողությունները ներառում են.

1. Ենթակառուցվածքների զարգացում. զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավում, ինչպիսիք են ճանապարհները, կացարանները և այցելուների կենտրոնները՝ զբոսաշրջիկների մատչելիությունն ու հարմարավետությունը բարձրացնելու համար:

2. Մշակութային ժառանգության պահպանում. պատմական և մշակութային տեսարժան վայրերի պահպանում, ներառյալ հնագույն ավերակները, միջնադարյան հուշարձանները և ավանդական քաղաքային թաղամասերը՝ պաշտպանելու Հայաստանի հարուստ ժառանգությունը՝ միաժամանակ այն որպես հիմնական գրավչություն ներկայացնելու համար:

3. Կարողությունների զարգացում և ուսուցում. տեղական համայնքների և զբոսաշրջային օպերատորների համար ուսուցում տրամադրել՝ ծառայությունների որակը բարելավելու, տեղական կենսապահովման միջոցները բարելավելու և զբոսաշրջության ոլորտում զբաղվածության հնարավորություններ ստեղծելու նպատակով:

4. Էկո-տուրիզմի խթանում. բնության վրա հիմնված զբոսաշրջության միջոցառումների աջակցություն, ինչպիսիք են արշավը և լեռնային հեծանվավազքը՝ միաժամանակ ապահովելով Հայաստանի բազմազան էկոհամակարգերի, ԱՊ-ների և էնդեմիկ տեսակների պաշտպանությունը:

5. Գինու և գաստրոնոմիական զբոսաշրջություն. Հայաստանի գինեգործության ավանդույթների և խոհարարական ժառանգության կիրառումը՝ գրավելու համար հատուկ շուկաներ, մասնավորապես Արենիի և Դիլիջանի նման կլաստերներում, որոնք հայտնի են գինու արտադրությամբ և տեղական խոհանոցով:

6. Համայնքի ներգրավվածություն. համայնքի վրա հիմնված զբոսաշրջության նախաձեռնությունների խրախուսում, որոնք ներգրավում են տեղացիներին

զբոսաշրջության պլանավորման և գործունեության մեջ, օգնում կանխել գյուղերի հայաթափումը և նպաստում արդար տնտեսական օգուտների:

7. Մարքեթինգ և միջազգային առաջխաղացում. նպատակաուղղված արշավների մշակում Հայաստանը որպես եզակի զբոսաշրջային վայր շուկայացնելու համար՝ կենտրոնանալով նրա բնական գեղեցկության, մշակութային հարստության և պատմական նշանակության միախառնման վրա:

Ծրագրի նպատակն է խթանել զբոսաշրջության զարգացումը Հայաստանում՝ հիմք ընդունելով կայուն տնտեսական աճը, մշակութային ժառանգության պահպանումը և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Հիմնական գործողությունները ներառում են.

Ենթակառուցվածքների զարգացում:

Զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավում, այդ թվում՝ ճանապարհների, կացարանների և այցելուների կենտրոնների արդիականացում՝ զբոսաշրջիկների մատչելիությունն ու հարմարավետությունը բարձրացնելու համար:

Մշակութային ժառանգության պահպանում:

Պատմական և մշակութային տեսարժան վայրերի վերականգնում ու պահպանություն, ներառյալ հնագույն ավերակները, միջնադարյան հուշարձանները և ավանդական քաղաքային թաղամասերը՝ Հայաստանի հարուստ ժառանգությունը պահպանելու և այն որպես հիմնական զբոսաշրջային գրավչություն ներկայացնելու նպատակով:

Կարողությունների զարգացում և ուսուցում:

Տեղական համայնքների և զբոսաշրջային օպերատորների համար ուսուցում կազմակերպում՝ ծառայությունների որակի բարձրացման, տեղական կենսապահովման հնարավորությունների ընդլայնման և զբոսաշրջության ոլորտում զբաղվածության խթանման համար:

Էկոտուրիզմի խթանում:

Բնության վրա հիմնված զբոսաշրջության զարգացում, մասնավորապես՝ արշավային երթուղիների, լեռնային հեծանվային ուղիների և այլ էկո-զբոսաշրջային նախաձեռնությունների աջակցություն՝ ապահովելով Հայաստանի բազմազան էկոհամակարգերի, ազգային պարկերի և էնդեմիկ տեսակների պաշտպանությունը:

Գինու և գաստրոնոմիական զբոսաշրջության զարգացում:

Հայաստանի գինեգործության և խոհարարական ժառանգության ներկայացում՝ նպատակային զբոսաշրջային շուկաներ գրավելու համար, մասնավորապես Արենիի և

Դիլիջանի նման գինեգործական ու խոհարարական ավանդույթներով հայտնի տարածաշրջաններում:

Համայնքների ներգրավվածություն:

Համայնքային զբոսաշրջության խթանում՝ տեղացիներին զբոսաշրջության պլանավորման և կազմակերպման գործընթացներում ընդգրկելու միջոցով, ինչը կնպաստի գյուղերի տնտեսական կայունությանը և կկանխի բնակչության արտահոսքը:

Մարքեթինգ և միջազգային առաջխաղացում:

Նպատակաուղղված մարքեթինգային արշավների մշակում՝ Հայաստանը ներկայացնելու որպես եզակի զբոսաշրջային ուղղություն՝ ընդգծելով նրա բնական գեղեցկությունը, մշակութային հարուստ ժառանգությունն ու պատմական նշանակությունը:

6.3 Գործունեության՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները

Ծրագրի և՛ բնապահպանական, և՛ սոցիալական ռիսկերը գնահատվում են որպես էական, և համապատասխան են համարվում հետևյալ ԲՄՄ-ները՝ ԲՄՄ1, ԲՄՄ2, ԲՄՄ3, ԲՄՄ4, ԲՄՄ5, ԲՄՄ6, ԲՄՄ8 և ԲՄՄ10:

Փոքր և միջին շինարարական և վերականգնողական աշխատանքները կրելու են մի շարք ընդհանուր ռիսկեր՝ բնորոշ նման գործունեության համար, որոնց համար պետք է իրականացվի ենթածրագրերի համապատասխան ԲՄ գնահատում: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հավանական է, որ տեղի ունենան հետևյալ ազդեցությունները.

Աղմուկ, թրթռում և արտանետումներ. աղմուկի և փոշու տարածումը և թրթռումը բնորոշ են աշխատավայրերի համար, որտեղ շահագործվում են շինարարական մեքենաներ: Անօրգանական փոշու արտանետումները հողային աշխատանքներից և բեռնատարների բեռնումից, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և մեքենաների կողմից օգտագործվող դիզելային վառելիքի այրումից վնասակար նյութերի և փոշու արտանետումները տեղի են ունենում շինարարական աշխատանքների ժամանակ:

Հողի էրոզիա. Հողի և ջրային մարմինների աղտոտում շինարարական թափոններով, հողի էրոզիայի հրահրում կամ ուժեղացում՝ սխալ կատարված հողային աշխատանքների և/կամ փոխառության միջոցով, լանդշաֆտի վատթարացում և դրա գեղագիտական արժեքի կորուստ՝ աշխատանքների ավարտից հետո շինհրապարակը չվերականգնելու և չներդաշնակեցնելու պատճառով:

Շինարարական վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնների առաջացում. ենթակառուցվածքների կառուցումը և վերականգնումը/բարելավումը կառաջացնեն շինարարական թափոններ: Սա կարող է նաև ներառել ասբեստ պարունակող նյութերի (ԱԲՆ) թափոնների սահմանափակ ծավալներ: Վերականգման ենթակա հին շենքերի տանիքները, ջրամատակարարման և ջրատար խողովակների ցանցերը կարող են ունենալ ասբեստի տանիքներ, ասբեստ պարունակող խողովակներ և կապար պարունակող ներկեր: Վտանգավոր թափոնների նման տեսակների հետ աշխատելը մարտահրավեր կլինի, հատկապես ասբեստի ազդեցության հետ կապված առողջության վտանգի մասին հասարակության նվազագույն

իրագրելիության պատճառով: Նման տանիքների փոխարինումը վտանգներ կառաջացնի աշխատողների առողջության համար և ոչ պատշաճ հեռացման դեպքում կարող է առաջացնել հանրային առողջության ռիսկեր բնակչության ավելի լայն զանգվածի համար:

Ենթակառուցվածքի շահագործման ընթացքում **կոշտ թափոնների ոչ պատշաճ կառավարման վտանգը**. Թեև զբոսաշրջությունը կարող է խթանել տնտեսական աճը, կոշտ թափոնների ոչ պատշաճ բեռնաթափումը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի աղտոտման և առողջության ռիսկերի: Թափոնների կուտակումը կարող է խաթարել զբոսաշրջային ուղղությունների գեղագիտական գրավչությունը՝ ստեղծելով անհրապույր պայմաններ և տհաճ հոտ: Ժամանակի ընթացքում թափոնների կառավարման վատ գործելակերպը կարող է վնասել տեղական էկոհամակարգերին, բացասաբար ազդել այցելուների փորձի վրա և խաթարել տարածաշրջանում զբոսաշրջության կայունությունը:

Ջրի աղտոտում. Շինարարական աշխատանքներից սովորաբար լինում են աղտոտման երեք աղբյուրներ, որոնք կարող են ազդել ջրային ռեսուրսների վրա, մասնավորապես Ադստն գետի վրա Դիլիջանի կլաստերի ներքո՝ տիդմի աղտոտում; ածխաջրածինների կամ քիմիական նյութերի (սոսինձ, ցեմենտ, ներկ և այլն) թողարկում; և տեղանքի այլ թափոնների արտանետումը ջրի մեջ, ինչպիսիք են աղբը կամ շինանյութերը: Մեքենաներից և կուտակված շինարարական նյութերից նավթի և քսանյութի արտահոսքի դեպքում նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են ներթափանցել ստորերկրյա ջրեր կամ հոսել դեպի ջրօգտագործողներ: Նույն արդյունքները հավանաբար կլինեն տրանսպորտային միջոցների և մեքենաների ոչ պատշաճ սպասարկումից: Շինարարական հեղուկ թափոնները տեղում բետոնի խմբաքանակից կարող են դառնալ հողի և ջրի ծանր աղտոտիչ, եթե ազատ արձակվեն առանց նախնական մշակման:

Աշխատավայրում պատահարներ. Ծրագրի շրջանակներում իրականացվելիք ֆիզիկական աշխատանքները չեն ենթադրում հատկապես վտանգավոր միջավայրի, պայթուցիկ նյութերի, ռադիոակտիվ կամ թունավոր նյութերի ազդեցություն: Այնուամենայնիվ, ԱԱԱ-ի ռիսկերը առկա են ցանկացած աշխատավայրում և կարող են տեղի ունենալ միջադեպերի դեպքում, եթե աշխատանքները պատշաճ կերպով չկառավարվեն: ԱԱԱ սպառնալիքները, որոնք կապված են ՋՄԵԾ-ի իրականացման հետ, սովորական են և վերաբերում են

- ԱԱԱ ռիսկի անբավարար գնահատմանը մինչև աշխատանքների մեկնարկը,
- աշխատավայրի ոչ պատշաճ պլանավորմանը և տեղում մաքրության ոչ պատշաճ կազմակերպմանը,
- աշխատավայրում նախագգուշական նշանների, սահմանագատման և պաշտպանիչ ցանկապատերի/բարիկադների բացակայությանը,
- բարձրության վրա աշխատանքներին, փայտամածների վրա՝ չպահպանելով անվտանգության նորմերը և պահանջները, մեքենաների շահագործումը վատ տեխնիկական վիճակում կամ մեքենաների շահագործման ուղեցույցների անտեսումը,
- Աշխատողների անվտանգության հանդերձանքի բացակայությունը կամ դրա սխալ օգտագործումը կարող է նաև վթարների պատճառ դառնալ՝ վնասվածքներով կամ զոհերով:

6.4. Շրջակա միջավայրի ազդեցությունների մեղմման առաջարկվող միջոցներ

Կլաստերների ներքո գտնվող յուրաքանչյուր ենթածրագրի համար կմշակվեն առնվազն առանձին տեղամասին հատուկ ԲՄԿՊ-ներ, ներառյալ մոնիտորինգի ծրագրերը: ԲՄԿՊ-ները կներառեն Թափոնների կառավարման պլան (ԹԿՊ), ՄԺԿՊ, Կենսաբազմազանության կառավարման պլան (ԿԿՊ), եթե անհրաժեշտ համարվի, որպես տեղանքի հատուկ ԲՄԿՊ-ի մաս՝ ԲՄՀՊ-ի համաձայն:

Աղմուկ, թրթռում և արտանետումներ: Շինարարական մեքենաների շահագործումից աղմուկի տարածումը կառավարվելու է սարքավորումների լավ աշխատանքային վիճակի ապահովման, շարժիչի պարապուրդի արգելման և աշխատանքային ժամերից հետո շահագործման արգելման միջոցով (հատկապես բնակավայրերի մոտակայքում): Փոշու արտանետումները կառավարվելու են շինարարական հրապարակների ջրցանման միջոցով՝ փոշու առաջացման գործողությունների ընթացքում և շինարարական մեքենաների և մեքենաների անվաղողերի լվացման միջոցով, ըստ անհրաժեշտության: Նաև շինանյութերի և թափոնների տեղափոխումը թույլատրվելու է միայն ծածկված բեռնատարներով: Կվերահսկվի շինարարական մեքենաների և մեքենաների շահագործման համար օգտագործվող վառելիքի որակը և կապահովվի սահմանված չափորոշիչների պահպանումը:

Երթևեկության կառավարում. Աշխատանքների կապալառուներից նաև կպահանջվի պարբերաբար թարմացնել և իրականացնել երթևեկության կառավարման պլանները: Շինարարական մեքենաների տեղաշարժի համար կսահմանվեն արագության սահմանափակումներ բնակավայրերի ներսում և դրսում: Բոլոր մեքենաները կպահվեն լավ աշխատանքային վիճակում՝ կանոնավոր ստուգումների և ժամանակին սպասարկման միջոցով:

Աշխատավայրի անվտանգության կառավարում. Եթե կապալառուները որոշեն օգտվել անվտանգության ծառայություններից, ՀՏՁ-ն կգնահատի նախքան անվտանգության անձնակազմ ներգրավելը, և մեղմացնող միջոցառումներ կիրականացվեն ծրագրի աշխատողներին, տեղամասերը, ակտիվները և գործողությունները պաշտպանելու համար: Անվտանգության հետ կապված գնահատումը և ռիսկերի կառավարումը մանրամասն կներկայացվեն տեղանքին հատուկ ԲՄԿՊ-ներում: ՀՏՁ-ն կիրականացնի ֆոնային ստուգում՝ ծառայություն մատուցողների կողմից նախկինում լիազորությունների խախտման և լիազորությունների չարաշահման դեպքերի առկայությունը ստուգելու համար: Անվտանգության անձնակազմի աշխատանքը հետևողականորեն մշտադիտարկվելու է:

Ծառերի և բուսականության պաշտպանություն. Արգելվելու է բուսականության ավելորդ մաքրումը կամ անհարկի վնասումը: Սա կներառի տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում դեպի նշանակված երթուղիներ՝ ի տարբերություն տեղանքների ազատ հատման աշխատավայրերում և շրջակայքում: Ծրագրի ազդեցության գոտում բուսականության մաքրմանը (օրինակ՝ հետիոտն արահետների և ճամբարների մշակումը), ներառյալ ճանապարհի ուղեծիրի մաքրումը, կնախորդի ինչպես վայրի աճող, այնպես էլ մշակութային տեսակներին պատկանող ծառերի գույքագրումը: Կարմիր գրքի տեսակների ծառերի հատման անհրաժեշտությունը կբացահայտվի և կխուսափվի, և կուսումնասիրվի տեղի բնակիչների կողմից պտղատու ծառերի օգտագործումը: Այս տեղեկատվությունը կօգտագործվի պատշաճ վճարումներ կատարելու համար, որոնք սահմանվել են Կարմիր գրքում գրանցված տեսակների բնությունից հանելու և համայնքների վրա տնտեսական ազդեցության համար պատշաճ փոխհատուցումը դիտարկելու համար:

Եթե «Հայ Անտառ» ՊՈԱԿ-ի տարածքում որևէ աշխատանք պետք է կատարվի Արենիի և Գորիսի կլաստերներում՝ համապատասխանաբար «Նորավանք» պահպանվող լանդշաֆտի և «Զանգեզուրի կենտրոն» համալիրի հետ պոտենցիալ կապված նշանակված պահպանվող տարածքների սահմաններում, կամ դրանց անմիջական հարևանությամբ, ապա ՀՏՁՀ-ն պետք է ՇՄԱԳ հաշվետվություն պատրաստի նախագծող կազմակերպության միջոցով և ստանա փորձագիտական եզրակացություն՝ գործունեության թույլտվություն ստանալու համար: ԲՄ սրբինինգի միջոցով ևս կորոշվի, թե արդյոք պահանջվում է ԿԿՊ-ի մշակում, որպես տեղանքի հատուկ ԲՄԿՊ-ի մաս:

Եթե Ծրագրի միջամտությունները պահանջում են աշխատանքներ իրականացնել թեկնածու Էմերալդ տեղամասերի մոտ (Ապարան և Դիլիջան կլաստերներ), անհրաժեշտության դեպքում կիրականացվի թեկնածու Էմերալդ տեղանքի վրա հնարավոր ազդեցությունների կենտրոնացված գնահատում: Ոչ մի դեպքում, ոչ մի գործողություն, որը բացասաբար կանդրադառնա կրիտիկական կամ բնական միջավայրերի վրա, չի ֆինանսավորվի Ծրագրից:

ԲՄ դիտազնումը/սրբինինգ/ և գնահատումը կուղղորդեն նախագծմանը և ԲՄԿՊ-ին վերատնկման կամ կանաչապատման աշխատանքների իրականացման համար՝ օգտագործելով տեղանքին համապատասխան տեսակներ:

Վտանգավոր և Ոչ-վտանգավոր Շինարարական թափոնների կառավարում. Շինարարական աշխատանքներից առաջացած վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնները տեղամասերում կպահվեն առանձին: Շինարարական կապալառուն տեխնիկական հսկիչի և ՀՏՁՀ-ի աջակցությամբ կուսումնասիրի ոչ վտանգավոր շինարարական թափոնների վերջնական հեռացման տարբերակները պայմանագրի գործողության ժամկետի սկզբում: Եթե տեղական իշխանությունները համայնային տարածքներ հատկացնեն, ապա այս պայմանավորվածությունը գրավոր կամրագրվի: Թափոնների չարտոնված հեռացումը խստիվ կարգելվի:

Տեխնիկական հսկիչի ԱԱԱ մասնագետները կապալառուի թիմի համար կանցկացնեն դասընթացներ ասբեստ պարունակող թափոնների անվտանգ շահագործման վերաբերյալ: Անվտանգության պահանջները կներառեն լիարժեք պաշտպանիչ հանդերձանք՝ հատուկ հագուստ, կոշիկներ, ձեռնոցներ և գլխարկներ կրելը, ռեսպիրատորների և պաշտպանիչ ակնոցների կրում: ասբեստի հանձնման ժամանակ գործարկվող մակերեսների ջրումը, նվազագույնի հասցնել ասբեստ պարունակող կառույցների մասնատումը՝ փոշու ավելորդ առաջացումից խուսափելու համար, ասբեստ պարունակող թափոնների փաթեթավորումը և մակնշումը, ասբեստ պարունակող թափոնների անվտանգ պահեստավորման ապահովումը տեղում և փակ թափքով բեռնատարների օգտագործումը վերջնական հեռացման վայրեր տեղափոխելու համար, ապահովել ասբեստ պարունակող թափոնների անվտանգ հեռացումը վերջնական պահեստավորման վայրում և բեռտնե շերտի իրականացումը:

